№ 6 (97) IX ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1899

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak„
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՆՇԱՆԱՒՈՐ ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐՈՒ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

Ստորև կը հրատարակենք երկու ականաւոր ֆրանսացիներու՝ պ. պ. Ֆ. դը Պրէսանսէի և Ժ. Ռիշառի նամակները։ Պր. Ֆրանսիս դը Պրէսանսէ արդի Ֆրանսայի ամէնէն ազդեցիկ հրապարակագիրներէն և հանրային գործիչներէն մէկն է։ Մինչև վերջերս „Temps“-ի քաղաքական բաժնի խմբագիրն էր. հիմա պր. Ժորժ Կլէմանսօյի հետ կը վարէ „Aurore“ արմատական թերթը։ Գաղափարի անվեհեր մարտիկ մըն է ինքը. ապրած ու մեռնիլ ուզող մը։ Ժանօթ ազնուապետական և բուրժուա Ֆրանսայի փտութեանը, վերջերս հրապարակաւ անցաւ ընկերվարականներուն բանակը։ Պր. Պրէսանսէ հայկական դատին յաջողութեան հաւատացող և ջերմ համակրող մըն է։ Իր նամակը, որ մեր թանկագին բարեկամին՝ պր. Ամիլկար Զիպրիանիի միջոցով ուղղած է մեզ, աւելորդ կը դարձնէ մեր կողմէն ոևէ մեկնաբանութիւն։

Պր. Ժէռօ-Ռիշառ, նախկին երեսփոխան, խմբագրապետն է „La Petite République“ ծանօթ լրագրին. իր կուսակցութեան ազդեցիկ պետերէն մէկն է, և յայտնի է իբր կատաղի կուռող մը ամէն վեհ դատի համար։

Cher citoyen Cipriani,

Une grave indisposition m'a empêché de vous adresser aussitôt qu'il était convenu les quelques lignes suivantes.

J'aime à croire qu'il est toujours temps pour exprimer la profonde sympathie avec laquelle quiconque en France a l'amour de la liberté et la haine des tyrans, suit les destinées de l'Arménie, cette nation martyre. La diplomatie européenne n'a pas su accomplir les devoirs les plus élémentaires du monde civilisé à l'égard des victimes d'Abdul-Hamid. Elle n'a su, ni châtier l'assassin, ni prévenir le retour des crimes; au moins faire bénéficier les survivants de quelques réformes compensatrices.

À l'heure actuelle, trop de symptômes concordants attestent l'imminence d'un nouveau cataclysme. Les grandes routes de l'Asie sont couvertes de malheureux Arméniens, et ce n'est pas seulement la Turquie, c'est la sainte Russie elle-même qui se conduit à leur égard en marâtre.

L'Arménie, comme tous les peuples, comme toutes les classes, comme tous les individus qui souffrent de l'injustice des temps présents, ne peut mettre son espoir que dans le réveil de la conscience populaire internationale, dans le renouveau des temps héroïques, dans la reprise — cette fois triomphale, puisque consciente—de la Révolution.

C'est à nous d'agiter sans cesse ni trève l'opinion, pour amener enfin ce jour tant désiré, cette aube de paix, de liberté — mais aussi de vengeance.

FRANCIS DE PRESSENSÉ.

Սիրելի քաղաքացի Զիպրիանի,

Ծանր տկարութիւն մը արգելք եղաւ ինձի, որ մեր համաձայնածին չափ շուտ ձեզի ուղղէի սա քանի մը տողերը։

Կը սիրեմ յուսալ թէ ամէն օր ժամանակն է արտայայտելու համար այն խորին համակրանքը որով ամէն մէկը,— որ Ֆրանսայի մէջ ազատութեան սէրն ու բռնակալին դէմ ատելութիւնն ունի, — կը հետևի Հայաստանի, այդ նահատակ ժողովուրդի ճակատագրին։ Եւրոպական դիւանագիտութիւնը չկրցաւ կատարել քաղաքակիրթ աշխարհի ամէնէն տարրական պարտաւորութիւնները Աբդիւլ Համիդի զոհերուն նկատմամբ. չկրցաւ պատժել մարդասպանը, ոչ ոճիրներու կրկնումին առջևը առնել, ոչ ալ գոնէ ջարդէն ազատածներուն, ատոր փոխարէն, քանի մը բարենորոգումներէ բան մը շահել տալ։

Բազմաթիւ համընթաց նշաններ կը վկայեն այս պահուս թէ նոր մեծաղէտ մը մօտալուտ է։ Ասիոյ մեծ ճամբաները ծածկուած են դժբախտ հայերով, և միայն Թիւրքիան չէ, այլ և սուրբ Ռուսիան ինքն ալ խորթ մօր մը պէս կը վարուի անոնց հետ։ Հայաստանը, — ինչպէս բոլոր ազգերը, ինչպէս բոլոր դասակարգերը, ինչպէս բոլոր անհատները, որոնք կը տառապին արդի ժամանակներու անիրաւութենէն, — իր յոյսը դնելու է միայն միջազգային ժողովրդական գիտակցութեան զարթնումին վրայ, դիւցազնական ժամանակներու նորափթթումին վրայ, Յեղափոխութեան վերսկսումին վրայ — որ այս անգամ յաղթական պիտի ըլլայ, գիտակցական ըլլալուն։

Մեզի կը մնայ անդուլ անդադար յուզել հանրային կարծիքը, բերելու համար վերջապէս այնքա՜ն բաղձալի օրը, այդ արշալոյսը խաղաղութեան, ազատութեան, բայց նա՛և վրէժխնդրութեանն ալ։

ՖՐԱՆՍԻՍ ԴԸ ՊՐԷՍԱՆՍԷ

9 juillet 99.

Citoyens,

Le sort épouvantable des Arméniens ne devrait laisser indifférente aucune nation civilisée. Nous voyons cependant que l'Europe s'associe, par sa complaisante inaction, aux crimes du sultan. Vous n'avez donc à compter que sur vous-mêmes. Agissez et les sympathies sentimentales des peuples, qu'on ne saurait solidariser avec leur gouvernement, deviendront vite militants ; vous verrez accourir à vous des énergies révolutionnaires, comme la Grèce, qui ne sut pas, ou ne voulut pas, les mettre utilement en œuvre.

Aidez-vous et la Révolution vous aidera.

Je suis votre dévoué.

GERAULT-RICHARD.

9 յուլիս 99

Քաղաքացիներ,

Հայերու զարհուրելի վիճակը ոչ մէկ քաղաքակիրթ ազգ պէտք չէր անտարբեր թողնէր։ Կը տեսնենք սակայն թէ Եւրոպան կամակատար անգործութեամբ մը մեղսակիցը կ'ըլլայ սուլթանին ոճիրներուն։ Յոյսերնիդ ձեր վրայ մենակ դնելու էք ուրեմն։ Գործեցէք և ժողովուրդներու, — որոնք համերաշխ պէտք չէ կարծել իրենց կառավարութիւններուն — զգայնիկ համակրանքները շուտով մարտնչող պիտի դառնան։ Դուք պիտի տեսնէք որ յեղափոխական ուժեր պիտի վազեն դան ձեզ մօտ, ինչպէս վերջերս Յունաստան, որ սակայն չկրցաւ կամ չուզեց օգտիւ գործածել անոնք։

Դուք ձեզ օգնեցէք, Յեղափոխութիւնը կ'օգնէ ձեզի։

Ձեր անձնուէր

ԺԷՌՕ-ՌԻՇԱՌ

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

„Եթէ կարելի լինէր ենթադրել, որ տաճկական վարչութիւնը այսպիսի ծգնաժամում (1876, սեպտեմբեր) կարող է Եւրոպայի համաձայնութեամբ կամ նրա վաւերացմամբ շարունակել իր օրինական գոյութիւնը Բուլղարիայում, այդ դէպքում պէտք է յանցանք համարել մարդկային արդարադատութեան ամէն մի բողոք իշխանութիւնը իշարը գործ դնելու դէմ, ամէն մի ընդդիմադրութիւն ամէնազազրելի բռնապետութեան դէմ։ — Բայց մենք դեռ չենք հասել այդ տեսակ ծայրայեղ ստորացման“...

Վ. ԳԼԱԴՍՏՕՆ

II

Բայց եթէ յեղափոխական շարժումը չի կարող պատճառ համարուել հայկական կոտորածների, նա գուցէ այս կամ այն դէպքում ծառայել է իբր առիթ, իբր պատրուակ այդ կոտորածները սկսելուն։ Ինչո՞ւ ուրեմն տալ առիթ կամ պատրուակ, կարող է ասել ընթերցողը, ինչպէս ասում են շատերը և դրանց թւում — թէև երբեմն շատ ծուռ ու մուռ ձևերով — նոյնիսկ մի քանի հայասէր եւրոպացիներ։

Քննենք հարցը և այս տեսակէտից։

—

Ով սովոր է հասարակական երևոյթները քիչ շատ կանոնաւոր կերպով ընդհանրացնելու, իհարկէ, գիտէ, թէ որքան ուժեղ է իրերի ընդհանուր հոսանքը պատմական առանձին դէպքերի, առանձին անցքերի դէմ։ Նա գիտէ, որ տարիներ ու տասնեակ տարիները, որ կարող են նշանակութիւն ունենալ անհատի կեանքում, պատմութեան մէջ մի-մի վայրկեաններ են լոկ, որոնց հիման վրայ դժուար է ոևէ գուշակութիւն անել. նա գիտէ, թէ որքան անիմաստ է ամբոխային տրամաբանութեան սովորական ընթացքը — ամէն երևոյթ դատել այն անմիջական տպաւորութիւնների համեմատ, որ ստանում է անհատը կեանքի այս կամ այն հարւածներից. նա գիտէ, ինչ է նշանակում խօսել „առիթ“ կամ „պատրուակի“ մասին այնտեղ, ուր կան ներքին, հիմնական պատճառներ։

Ահա այդպէս վերադարձելով կեանքի պատմական ելևէջներին, մենք մեզ համար միանգամայն պարզ ենք համարում հետևեալ չորս դրութիւնները.

1. Երբ կան հիմնական պատճառներ ոևէ երևոյթի առաջ գալու համար — առանց ակներև „առիթի“ էլ երևոյթը զարգանում է։

2. Երբ չկան հիմնական պատճառներ — նոյնիսկ խոշոր դէպքերն էլ „առիթի“ նշանակութիւն չեն ստանում.

3. Երբ կան հիմնական պատճառներ — հարկաւոր դէպքում „առիթ“ կամ „պատրուակ“ երբեք չեն պակասիլ։

4. Երբ կան հիմնական պատճառներ — դրանց դէմ կուող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարուեն։

Այս կէտերի համաձայն էլ մենք կը դասաւորենք մեր ասելիքը։

—

Բոլորիս յայտնի են այն կատաղի հալածանքները, որ վերջին տարիները ռուս կառավարութիւնը յարուցել է հայերի դէմ։ Մեզ համար այդ ամէնը շատ հասկանալի են այն տեսակէտից, որ հայ տարրը վերջին ժամանակներս տնտեսապէս և մտաւորապէս ուժեղանում էր Կովկասում, իսկ ռուսական անընդունակ բիւրոկրատիան եթէ շատ բան էլ չի հասկանում, գոնէ այդքանը հասկանում է, որ իր սեփական ուժը պահպանելու հիմնաքարը — հպատակների թուլութիւնն է։ Նոյն տեսակէտից մեզ համար միանգամայն պարզ են նաև հրեաների պարբերական ջարդերը հարաւային Ռուսաստանում և մի շարք ուրիշ երևոյթներ։ Բայց հարցնում ենք. ի՞նչը „առիթ“ տուեց այդ բոլորին։ Որ հրեաները, իբր մի ամբոխութիւն, ամէն բանով հետաքրքրւում են, բացի քաղաքական հարցերից — այդ յայտնի է համայն աշխարհին։ Որ հայերը Ռուսաստանում ամէնախնարհ կերպով հպատակւում են կառավարութեան բոլոր հարւածներին — այդ ևս ստոյգ է. ռուսաց կառավարութեան բոլոր խուզարկութիւններն ու ձերբակալումները, գաղտնի հսկողութիւններն ու բազմաթիւ քննութիւնները

երբեք չկարողացան ռուսաց կառավարութեան դէմ ոչէ ագիտացիայի, ոչէ գաղտնի գործունէութեան հետքեր գտնել։ Կարող է միթէ խօսք լինել սրանից էլ աւելի „խելացութեան“, „զգուշութեան“, „շրջահայեցութեան“ մասին։ Եւ սակայն հայերին Կովկասում հալածում են, հալածում են անվերջ, ամենաանսիրտ, ամենատխմար կերպով։ Բայց երևակայեցէք, ընթերցող, ինչ կը լինէր, եթէ մէկը մեզնից կովկասեան հայ դըպրոցների առաջին փակման միջոցին, այսինքն 1885-ին, չտանելով կառավարութեան բարբարոս կարգադրութեանը՝ վճռէր ռուսահայերի մէջ այդ առթիւ առաջացած ընդհանուր զայրոյթի արտայայտութիւնը լինել և հայոց դպրոցներից մէկի կամ միւսի շէմքին տեղնուտեղը փռէր ռուս պաշտօնեաներից ոչէ Կիրիլովի կամ Պետրովի դիակը... Կարող էք մի վայրկեան անդամ տարակուսել, որ այդ դէպքում հետագայ բոլոր հալածանքների „պատճառ“, „առիթ“, „պատրուակ“ — ինչ կամենում էք — պիտի համարուէր այդ դիմադրութեան դէպքը։ Եւ ո՞վ գիտէ, կը բաւականանար արդե՞օք ամբոխային տրամաբանութիւնը միայն Ռուսաստանով, թէ Լօրանօվների քաղաքականութեան (հայոց հարցի վերաբերմամբ) սկզբնապատճառն էլ նոյն այդ „սոսկալի“ դէպքը պիտի համարէր... Նոյնը, իհարկէ, կը լինէր և հրեաների մէջ, եթէ այնտեղ էլ ոչէ հակակառավարչական գոյն ունեցող իրողութիւններ տեղի ունենային։ Ահա ուրեմն հալածանքների և ջարդերի կենդանի օրինակներ, որոնց համար իզուր կը լինէր ոչէ ակներև „առիթ“ փնտռելը։

Բայց անցնենք Թիւրքիային։

1880 թւի սեպտեմբերի 11-ին Բ. Դրանը ներկայացրած ընդհանուր մի ծանուցագրում վեց պետութիւնները, իմիջի այլոց, պնդում են.

„Հէնց այն նախադասութիւնները, որոնցով Բ. Դուռը իր համար իրաւունք է համարում խօսել հայաբնակ նահանգներում կատարուած յանցանքների մասին, ապացուցանում են, որ Դուռը չի ընդունում այն անիշխանութիւնը, որ տիրում է այդ նահանգներում, ոչ էլ իրերի դրութեան լրջութիւնը, որ եթէ շարունակւի, հաւանական է, առաջ պիտի բերի քրիստոնեաների ջնջումը այդ լայնատարած նահանգներում“։

Ռուս սպայակոյտի գնդապետ Կարցով՝ Ռուսաց աշխարհագրական ընկերութեան յիշատակարաններում „Քրդեր“ վերնագրով իր մի յօդուածի մէջ բերում է հետևեալ փաստը.

„1880 թւին Վանում տեղի ունեցաւ քիւրդ ցեղապետների մի համագումար (գլխաւոր խորհուրդը իսկապէս կայանում է Շամդինանում)։ Ասում են, որ տաճիկները գաղտնի առաջարկեցին նրանց՝ վերջնապէս ոչնչացնել Քիւրդիստանում (*) դեռ մնացած հայերին։ Ոչ մի անկարելի բան չկայ այսպիսի մի առաջարկութեան մէջ, եթէ ինկատի առնենք, որ այն ժամանակ նոր էր հրատարակուած հայերին ինքնավարութիւն խոստացող 61-րդ յօդուածը։ Չնայելով իրենց ատելութեան եւ արհամարհանքին դէպի հայերը, քիւրդերը սակայն չընդունեցին այդ առաջարկը, ինչպէս պատմում են, այն պատճառով, որ պետերից մէկը նկատեց. «Երբ մենք ջնջենք հայերին՝ տաճիկները մեզ վրայ կը յարձակւեն»։

Փաստը միանգամայն ճիշդ է և իր ժամանակին 900 հայ Վանում ընդհանուր ստորագրութեամբ բողոքեցին կառավարութեան այդ ծրագրի դէմ։ Բայց, ինչպէս տեսնում է ընթերցողը, թէ վեց պետութիւնների հաւաքական ծանուցագիրը, որ նախատեսնում էր հայերի ջնջումը առանց սակայն կանգ առնելու դրա համար հարկաւոր ոչէ „առիթի“ վրայ, և թէ հայերին ջնջելու ծրագիրը ու դրա գործադրման համարձակ փորձերը տեղի ունեցել մի այնպիսի ժամանակ, երբ, որքան մեզ յայտնի է, հրապարակի վրայ գոյութիւն չունէր ոչ մի հայկական յեղափոխական կազմակերպութիւն։

Ո՞ւր մնացին ուրեմն յանցապարտ „առիթները“...

—

Անցնենք մեր վերը բերած չորս դրութիւններից երկրորդին։

Գաղտնիք չէ, որ թիւրք ազգաբնակութիւնը Կովկասում մի օրրան է ամենասոսկալի աւազակութիւնների, որ թիւրք աւազակների անթիւ խմբերը Կովկասում կազմում են երկրորդ կառավարութիւն, որ նրանք երբեք չեն խնայում ռուս ոստիկանութեան ներկայացուցիչներին՝ աջ ու ձախ գնդակահարելով նրանց, և մինչև իսկ փորձեր են արել գերի վերցնելու գաւառապետներ և նոյնիսկ նահանգապետ։ Յայտնի է նոյնպէս, որ նոյն ռուս կառավարութիւնը կովկասեան ազգերից թիւրքերին սիրում է բոլորից աւելի։ Զարմանալի չէ։ Թիւրքերը երկիրը անիշխանութեան են մատնում, կոտորում են իրենց ետևից գնացող մանր ու մեծ պաշտօնեաներին, ամէն տեղ իրենց հայրենակիցների մօտ գտնում են ապաստան և պաշտպանութիւն, սպառնում են մի գեղեցիկ օր երկիրը թողնել առանց կառավարիչների, բայց և այնպէս ռուսները այսօր հոգեզմայլ քնքշութիւն են տածում դէպի թիւրքերը, փոխանակ... փոխանակ նրանց ջարդելու, ինչպէս պիտի հետևէր ամբոխային սովորական աշխարհայեացքից։ Նոյն երևոյթը տեղի ունի Տաճկաստանում քրդերի վերաբերմամբ։ Շատ տեղ և շատ վաղուց քիւրդ աշիրաթները թշնամական, անկախ դիրք են բռնել տաճիկ կառավարութեան դէմ. բայց այն օրից, երբ վերջինս համոզուեց, որ քրդական ցեղերը իրենց ներկայ վիճակում և սեփական ուժերով միայն անկարող են „Քիւրդիստանը“ վերականգնել, նա ոչ միայն չի հալածում քրդերին, այլ ինչպէս գիտենք, նրանց վրայ է հիմնում հարկաւոր դէպքերում իր ուժը։ Ի՞նչ եզրակացութիւն կարող ենք հանել այս երևոյթներից — այն, որ քանի թիւրքերն ու քիւրդերը Կովկասում և Տաճկաստանում գտնւում են իրենց այժմեան տնտեսական դրութեան և կատարեալ տգիտութեան մէջ, նրանց ներում են և դեռ շատ երկար ժամանակ պիտի ներին հազար ու մի տեսակ „առիթներ“...

—

Լօրդ Ստրատֆորդ դը Ռէդկլիֆը, որ համարւում է Տաճկաստանի լաւ բարեկամներից մէկը, իր „Արեւելեան խնդիրը“ աշխատութեան մէջ ասում է.

«Տաճկաստանը թոյլ է, մոլեռանդ եւ վատ է կառավարւում... Արեւելեան հարցը մի փաստ է, մի իրականութիւն, որ ձգձգւում է անվերջ... Դա մի հրաբուխ է... որի ժայթքումները կրկնըւում են յաճախ, բայց այդ ժայթքումների առիթները անորոշ են եւ ազդեցութիւնը՝ աւերիչ... Միթէ 1860 թւին Սիւրիայում տեղի ունեցած կոտորածը մեզ համար անսպասելի չէ՞ր... Ունե՞նք արդեօք ո՛եւէ յուրջ հաւատիք, որ չեն

կրկնելու միևնոյն սարսափները, միևնոյն անխուսափելիութիւնը եւ նոյնատեսակ դէպքեր... Տաճկական կայսրութեան արդի դրութիւնը որոշւում է նրա դէպի կատարեալ անզօրութիւն տանող բնական ընթացքով... Մենք չգիտենք, արդեօ՞ք շուտով եւ ո՞ւր կրկին կը ժողովեն անդղներին նոր կոտորածներ կամ խռովութիւնները»։

„Ծայթքումները կրկնւում են յաճախ", „առիթները անորոշ են", „դէպքերը անսպասելի" — ասում է Ստրատֆորդը ու անցնում, որովհետև այդ ամէնը բխում է Տաճկաստանի դրութեան „բնական ընթացքից", որովհետև երբ մի պետութեան կեանքում գոյութիւն ունեն որոշ հիմնական պայմաններ, նրանք անգառնալի կերպով այսօր թէ վաղը պիտի առաջացնեն նաև իրենց ճակատագրական հետևանքները բոլոր հարկաւոր և ոչ հարկաւոր, բոլոր որոշ և անորոշ „առիթ-պատրւակներով" հանդերձ։

Եւ իրաւ։ Մենք արդէն տեսանք, որ սուլթան Աբդիւլ Համիդը հայերին կոտորելու ծրագիրը գործադրելու համար ջանքեր էր անում դեռ 1880 թւին, երբ ըստ երևոյթին հայերի կողմից „առիթներ" չէր տրւած։ Բայց մի՞թէ, եթէ այդ էլ չգիտենայինք, երբևիցէ տաճիկ կառավարութեան համար պիտի պակասէին „առիթ-պատրւակները"։

1880 թւի մայիսին հիւպատոս Էվերստ հեռագրում էր անգլիական կառավարութեան.

«Եթէ մի տարի առաջ (1879) չկար ոչ կեանքի, ոչ գոյքի ապահովութիւն, այժմ այդպիսի ապահովութիւն աւելի քիչ է։ Եթէ առաջ աղքատութիւն կար, այժմ աւելի է. արդարադատութեան նշոյլ անդամ չկայ, իսկ յանցանքները, կաշառակերութիւնը եւ բռնութիւնները աւելացել են... Ամբողջ ազգաբնակութիւնը կատարեալ յուսահատութեան մէջ է եւ այժմ աւելի յաճախ, քան առաջ, վրդովիչ փաստերը առաջ են բերում անկարգութիւններ եւ տեղական խռովութիւններ, մինչեւ անգամ առանց մասնաւոր փոխադարձ համաձայնութեան եւ նախամտածութեան խեղճ ռայաների կողմից, որոնք համբերութեամբ տանում էին բազմադարեան բռնութեան ճնշումը»։

Ընթերցողին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել այս „առանց փոխադարձ համաձայնութեան և նախամտածութեան" դեռ 1880-ին առաջ եկող „տեղական անկարգութիւնների և խռովութիւնների" վրայ. հրաւիրում ենք նրան ծանօթանալ հիւպատոս Կէյտօնի մի հեռագրի հետ, ուր նա նկարագրում է մի ինչ որ բինբաշու հարստահարութիւնների պատճառով ծագած այդ տեսակ խռովութիւններից մէկը (Կապոյտ գիրք, 1881). յիշեցնում ենք նրան, որ Տաճկաստանում լապտերներով չպէտք է փնտռել „վրդովիչ փաստեր". առաջարկում ենք մտաբերել 1880-ի Վանի բողոքագիրը. խնդրում ենք ինկատի առնել, որ հայ ժողովուրդը այնքան ստորացած չէր, որ նա միշտ լռութեամբ տանէր իր դժոխային դրութեան ամբողջ ծանրութիւնը, — ու այս բոլորից յետոյ կրկնում ենք մեր հարցը. մի՞թէ իրաւ որ հայկական հալածանքների համար „առիթներ" պիտի պակասէին Հայաստանում, եթէ յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութիւնը չլինէր։

Վերջապէս հայկական անօրինակ հալածանքների համար անպատճառ „առիթներ" որոնողներին կ'առաջարկէինք մի փոքր կանգ առնել նաև ուրիշ կարգի մի շարք երևոյթների վրայ, որոնք՝ հայ ժողովրդի թոյլ ցնցումների դիմաց, գուցէ, աւելի մեծ, աւելի նշանաւոր „առիթներ" համարւեն։

Այդպէս՝ հայկական հարցով հետաքրքրւող բոլոր հեղինակները պնդում են, թէ տաճիկ կառավարութիւնը շատ լաւ գիտէր, որ հայ ժողովուրդը ապստամբութեան համար չունի „ոչ փող, ոչ զէնք", և այդ պատճառով հայերի յեղափոխական ձգտումներից նա երբեք երկիւղ չունէր։ Հայկական հարցը վտանգաւոր էր Տաճկաստանի համար — ասում են միևնոյն հեղինակները — այն տեսակէտից, որ խնդրի հետ կապւած էր եւրոպական միջամտութիւն — մի հանգամանք, որ միշտ սոսկում է ազդել թիւրքերի վրայ։ Եթէ մի բոպէ ընդունենք այդ տեսակէտը, այն ժամանակ պէտք է ընդունենք նաև, որ հայ յեղափոխական ձեռնարկների հետ չեն կարող համեմատւել իրենց աւելի գրգռիչ ազդեցութեամբ ոչ 1879 թւին Անգլիայում ծագած ծովային ցոյց անելու միտքը, ոչ մեծ պետութիւնների բազմաթիւ անգամ կրկնած պահանջները, ոչ Սասունի քնիչ յանձնաժողովը, ոչ բարենորոգումների ծրագիրը և ոչ էլ նոյնիսկ Մեծ ծերունու շանթող լեզուն, որի ուժը սուլթան Համիդը զգացել էր դեռ 1876 թւից։

Ահա ինչ են ասում այդ կարգի երևոյթների մասին մի քանի հեղինակներ։ Դօքտոր Լէպսիուսի գրքում կարդում ենք.

«Հայ ազգաբնակութեան ջնջման այդ ծրագիրը արդէն տարիներից իվեր պատրաստւած էր։ Եւ այդ ջնջման գործը կատարելու համար նշանակւած գործիքները խորին լռութեան մէջ բանում էին, երբ Բ. Դուռը հարկադրւեցաւ՝ Հայաստանի մէջ ռէֆօրմներ մտցնելու ստիպողական պահանջի պատճառով՝ արագացնել այդ շարժումը։ Այն ժամանակ նա որոշեց ամբողջ Եւրոպան իր դէմ ոտքի հանելու վտանգի տակ՝ մէկ հարւածով բնաջինջ անել հայ ազգը եւ վերջ դնել այդ ատելի քրիստոնէութեան, որ անդադար Եւրոպայի համակրութիւններն էր գրգռում։ Ջարդերը կատարւեցան մի յայտագրի համաձայն, որի մէջ տեղերը, վայրկեանը, զոհերի ազգութիւնը եւ մինչեւ անգամ սպանութիւնների ու թալանի եղանակը նախատեսնւած էին»։

Նոյն հեղինակը մի ուրիշ տեղ.

«Թիւրք մի բարձր պաշտօնեայ՝ խօսելով հայկական հարցի մասին՝ հետեւեալ կարծիքն է յայտնել. «Մի խաբւիք կառավարութեան այն անմիտ տեղեկագրերով, որոնք ճիգ են թափում կոտորածները հայերի վրայ ձգելու։ Կառավարութիւնը հայերին պատժելու համար մի նախատեսնւած ծրագիր ունէր. սուլթանը զայրացած էր, որ իրեն ստիպում էին ռէֆօրմներ տալու եւ դրա համար ռէֆօրմների ծրագիրը ստորագրելուց յետոյ նա հրաման տւաւ ջարդել հայերին իր զօրութիւնը ցոյց տալու համար»։

Լսենք և Դիլլօնին.

«Անկողմնակալ դիտողը, որ ծանօթ է Տաճկաստանի եւ նրա բնակիչների սոսկալի դրութեանը... համարձակ պիտի պնդէր, որ հրապարակային ժողովների մէջ համակրութեան արտայայ-

տութիւնները, որոնց հետեւում է կատարեալ անգործութիւն, ոչ միայն աւելի վատ են, քան իրական օգնութիւնը, այլ եւ դրականապէս վնասակար են... Աւելի լաւ չէր լինիլ լռէինք բոլորովին Սասունի կոտորածների առթիւ եւ աչքներս փակէինք մահու սարսափների առաջ, քան կատաղութեան չափ գրգռէինք տաճկին (քննիչ մանաժողով ուղարկելով) եւ յետոյ թողնէինք նրան կատարելապէս ազատ իր չարութիւնը քրիստոնեաների գլխին թափելու»...

Ահա ինչ է ասում և պ. Լաուէրը ամերիկացի միսիոնար Գրինի գրքի յառաջաբանում.

«Իմ համոզմունքն է, որ այդպիսի փոփոխութիւններ (բարեփոխում Տաճկաստանում) ներկայումս կարող են ձեռք բերել, եթէ քաղաքակիրթ աշխարհում արդէն առաջ եկած հետաքրքրութիւնը արտայայտի խելացի եւ վճռական գործողութեամբ։ Յոյսս դրած այդպիսի գործողութեան վրայ, ես հրատարակում եմ այս փոքրիկ գիրքը։ Եթէ իմ յոյսը չարդարանայ, ապա այս գիրքը,—ինչպէս եւ տաճկական տիրապետութեան ղոհերի օգտին տեղի ունեցող ամբողջ ագիտացիան—միայն աւելի կը սաստկացնի ճնշումը»։

Ցեղը չէ, իհարկէ, այստեղ խօսելու, թէ որքան իրաւացի է Գրինի գրքի հրատարակութիւնը „խելացի և վճռողական գործողութեան“ համար աւելի նպաստաւոր հանգամանք նկատել, քան հայ յեղափոխականը կարող էր համարել իր ռումբը, որով նա թնդում էր Թիւրքիայի սրտում. փաստերը արդէն կատարուել են. գիրքը հրատարակուել է, ռումբն էլ պայթել — երկուսն էլ „յոյսները դրած քաղաքակիրթ աշխարհի խելացի և վճռական գործողութեան վրայ“... Ցեղը չէ նաև քննել, թէ ո՞ր չափով արդար է Դիլլօնը „վնասակար“ գտնելով Անգլիայի միջամտութեան փորձերը։ Մեզ համար հետաքրքիրը այն է, որ հետևելով այդ հեղինակներին, մենք պիտի համարենք սուլթանին գրգռելու մի մի խոշոր „առիթներ“ նաև ռէֆօրմների ծրագիրը, դեսպանների դիմումները, պարլամենտական հարցապնդումները, Սասունի քննիչ մանաժողովը, հայոց դատին նուիրուած բոլոր հավակրական միտինգները, հրատարակութիւնները և այլն և այլն։ Գուցէ, այդ այդպէս էլ է, — մենք չգիտենք, բայց և այնպէս փաստը սա է, որ մենք դեռ չենք պատահել մի հայի, որ չուզենար հայկական հարցը միշտ յուզուած տեսնել Եւրոպայի մէջ, մենք դեռ չենք լսել և ոչ մի ձայն, որ ուղղուած լինէր մեր անբախտ ժողովրդի վիճակին արձագանգ տուող ոևէ քայլի դէմ, որ անշահախնդրաբար արել են օտարները։ Եւ ո՞ւմ բերանը կը բացուէր այդպիսի մի դատապարտութեան համար։ Սակայն տեսնում էք, որ շատ յարգելի անձնաւորութիւնների կարծիքով, այդ բոլորը նոյնպէս կարող էր „առիթ“ ծառայել... Այո՛, ընթերցող, երբ կան հիմնական պատճառներ, խնդրի հետ կապուած ամէն մի երևոյթ ինքնըստինքեան „առիթ“ կամ „պատրուակ“ կարող է համարուել, և դրանով չէ, որ չափւում է երևոյթի նշանակութիւնը։

Դա լոկ մեր տեսակէտը չէ, այլ պատմական մի ճշմարտութիւն, որի վերջնական պարզաբանութեանը կը նուիրենք մեր երրորդ — վերջին յօդուածը։

ԳՈՒՐԳԷՆԻ ԵՒ ԻՐ ԽՄԲԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒՄԸ
ԵՂԵՐԱԿԱՆ ԿՌԻՒ ՄԸ ՅՐՕՆՔԻ ՄԷՋ

(ՆԱՄԱԿ ԲԱՂԷՇԷՆ)

Ապրիլ 24-ին (Հ. տ.) Մուշէն քաշուած հեռագիր մը կը հաղորդէր տեղիս կուսակալին թէ Դաշնակցութեան Տարօնի գործիչներէն Գուրգէնը եօթը ընկերներով կը գտնուէր Մուշէն երեք ժամ հեռաւորութեամբ Ցրօնք գիւղը։

Կուսակալը սաստիկ կը յուզուի. յեղափոխական շարժման յարաճուն զարգացումը այնքան մտատանջութիւն սկսած էր արդէն պատճառել կառավարական շրջանակներուն, որ դեռ այդ օրերն իսկ Մուշէն Բաղէշ կանչուած էր յայտնի ցեղապետ Տալիպ էֆէնտին— անդամ Խտարէի ժողովին — այդ առթիւ խորհրդակցութիւններ կատարելու համար։ Եւ յանկարծ „ջան-ֆէդայիները“ այդքան մօտ Մուշին. վախն ու ուրախութիւնը փոխնիփոխ կը յաջորդեն։ Կուսակալ Մէճիդ պէյ, հեռագիրն ստանալուն պէս, կը հրամայէ Տալիպ էֆէնտիին և հեծելազօրքի հրամանատար Իզզէթ պէյին որ անյապաղ փութան 50 հեծեալ զինուորներով Ցրօնքը պաշարեն ու ֆէդայիները ողջ-ողջ բռնեն։ Այնքան մեծ էր սարսափը, որ կուսակալը այդքանով ալ չի շատանար և կիւրակէ առտու կը հեռագրէ Մուշի կառավարչին որ 500 զինուոր ևս օգնութեան հասցնէ Ցրօնք. իսկ Տալիպ էֆէնտին ճամբան պատահած բոլոր քիւրդ աշիրաթներուն կը պատուիրէ որ չուշանան իր ետևէն Ցրօնքի վրայ քալելու։

Երկու հազարի արդէն հասած այդ բազմութիւնը հազիւ սիրտ կ'ընէ վերջապէս վրայ տալ յանկարծ Ցրօնքին, ապրիլ 25-ին, կիրակի, կէս օրին...

Իսկոյն կանչել կուտան գիւղին ռէսը Սլօն և նեղը կը լծեն զինքը.

— Ջան-ֆէդայի կայ հոս. Բաղէշէն ուղղակի եկած ենք. ցոյց տո՛ւր անոնց պահուած տեղը, թէ ոչ հիմա գիւղդ կը վառենք...

Սլօն կը պատասխանէ թէ այդպիսի՛ մարդիկ չկան գիւղը. թէ սուտ է այդ լուրը և վերջապէս ինքը տեղեկութիւն չունի։ Զինուորներուն հրաման կը տրուի այն ատեն գիւղացիները չարչարել. ասոնցմէ մէկը ճարահատ մարագ մը մատնանիշ կ'ընէ։

Արդարև հոն էին ջան-ֆէդայիները, ութը հոգի, որոնք մարագի մէջ կը հանգստանային։ Զօրքը անմիջապէս կը շրջապատէ մարագը, և կըսկսի պատնէշներ շինել շուրջը։ Տղայք կը տեսնեն որ մատնուած էին։

Ցրօնքի մօտը լեռ չկայ, իսկ օր ցերեկով թշնամիներու այդ ահագին բազմութիւնը ճեղքել անցնելու մասին մտածել ալ կարելի չէր։ Ուստի ֆէդայիները կը խորհին մինչև մութը դիմադրեն ու գիշերանց դուրս ելլեն։

Կռիւը սկսելէ առաջ թիւրքերը ամբողջ ժամ մը կը փորձեն համոզել մեր ընկերները որ անձնատուր լինին։ Ֆէդայիի դիակներ ունենալը փորձով գիտէին թէ որքա՞ն սուղ նստած էր միշտ իրենց. իսկ ողջ ֆէդայիներ բռնել տանել, էլսւած յաղթանակը պիտի լինէր...

Ապարդի՞ւն ջանքեր. կ'որոտան վերջապէս հրացան-

ները, և գնդակները տարափի պէս կրսկսին տեղալ մարագի վրան։

Երկու կէտէ միայն մերինները կարող էին կուիլ. մարագի դուռն ու երդիքը. դռան բացուածքի ուղղութեամբ ո՛չ քիւրդ համարձակած էր կանգնիլ, ո՛չ ալ զինուոր. պարզ է որ երդիքէն ալ մեծ բան մը կարելի չէր ընել. ուստի տղայքը կ՚որոշեն մարագին ետևը ծակ մը բանան։ Այդպէս ալ կ՚ընեն, ծակը բանալնուն պէս, առաջին անգամ աչքերնուն կ՚իյնայ Տալիպ էֆէնտին, որ դիմացը, տանիքի մը վրայ նստած, կռիւը կը դիտէր. մէկ գնդակով մը կը սատկեցնեն վար կը գլորեն։ Այդ միջոցին իրարու ետևէ կրսպաննեն չորս զինուոր և չորս քիւրդ, նաև հարիւրապետ մը, Հասան պէյ, որ հեծելազօրքի հրամանատարին աներձագն էր։

Ֆէդայիներուն դեռ մնաս մը հասած չէր։

Տալիպ էֆէնտիի և հարիւրապետի մահը վհատում կը ձգէ պաշարողներուն սիրտը. իրիկուան ժամը տասն և մէկն էր արդէն (ըստ տաճկաց), և հրամանատարը կը տեսնէ որ մէկ-երկու ժամէն երբ մութը պատէ, ա՛լ անկարելի պիտի լինի ֆէդայիներու հետ գլուխ ելլել. ուստի իրենց սովորական հնարքը միտ բերելով, հրաման կ՚ընէ որ մարագը կրակի տան։ Անմիջապէս երկու արկղ նաւթ կը բերեն կը սրսկեն մարագի վրան ու կը վառեն։ Ծուխն ու բոցը կը լեցուի մարագը. ա՛լ անկարելի էր հոն երկար մնալ Նախ չորս հոգի մէկանց դուրս կը նետուին մարագի դռնով, բայց չորսն ալ տեղն ու տեղը գնդակահար կրսպաննուին. թշնամիները ամէնքն ալ իրենց հրացաններն ուղղած էին մարագի դուռը, սպասելով դուրս ելլողներուն։ Ներսը մնացողները չվարանեցան պահ մը իսկ. երկու հոգի ալ դուրս թռան — Խուրշուան ու Տիգրանը — և թէև երեք հոգի գետին տապալեցին, բայց քանի մը քայլ չորած՝ ինկան իրենք ալ։ Անոնց ետևէն իսկոյն դուրս ելաւ Գուրգէնը և անընդհատ սկսաւ հրացան պարպել իր շուրջը. պահ մը շփոթ ինկաւ պաշարող բազմութեան մէջ, և Գուրգէնը կրցաւ կէս ժամուայ ճամբայ կտրել դէպի դաշտը. այն ատեն հեծեալներ սկսան հետապնդել իր ետևէն. բայց Գուրգէնի շեշտակի հարուածները ետ կը կեցնէին անոնք։ Թէև բազմաթիւ վէրքեր ստացած, բայց դեռ անընկճելի էր իր կորովը. քիչ մըն ալ դիմադրութիւն, և մութը վրայ հասնելուն, թերևս ճողոպրէր ու իր հետքը կորսնցնէր, բայց այդ պահուն նկատեց որ փամփուշտները հատած էին... Տեսաւ քաջը որ մահն անխուսափելի էր. չկորսնցուց իր պաղարիւնը, բարձրացաւ քարի մը վրայ, զարկաւ փշրեց հրացանին բլթակը — որպէս զի թշնամին գէթ չկարենայ իր հրացանէն օգտուիլ — և հրացանի կոթին կռթնած, անխռով սպասեց մահուան... Թշնամիները՝ տեսնելով որ Գուրգէնը տեղէն չի շարժիր, հետզհետէ մօտ եկան, քանի մը հրացան ալ պարպեցին վրան... ինկաւ Գուրգէնը անկենդան։ Ա՛յն ատեն միայն զինուորներն ու քիւրդերը աճապարեցին իրենց քաջութիւնը ցոյց տալու. դաշոյն, թուր ու սուր ջնջաց, որով չծակծկէին նահատակին անշունչ դիակը. տասնէն աւելի գնդակ միայն գլխուն զարկած էին...

Այդպէս մեռան այդ եօթը քաջերը. ութերորդը աւելի եղերական վախճան մը ունեցաւ. դեռ մարագին մէջ արդէն վէրք ստացած ըլլալուն, չկրցաւ դուրս ելլել և ծխամահ եղաւ հոն։

Թշնամի կողմէն ինկան իդարէի անդամ Տալիպ էֆէնտին, միլազիմ Հասան պէյ, 2 զինուոր և 9 քիւրդ։ Կան բազմաթիւ վիրաւորներ։

Հետևեալ օրը եօթը քաջերու դիակները քաղաք բերին, ստուգելու համար թէ իրա՛ւ անոնց մէջն էր Գուրգէնը։

Մէկ գերեզմանի մէջ ամփոփեցին եօթին ալ մարմինները։ Ութերորդը, որ մարագի մէջ մեռած էր, այնտեղ ալ թաղուեցաւ։

ՖԷԴԱՅԱԿԱՆ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ԽԱՆԱՍՕՐԷՆ ՊԱՂՐ-ԴԱՂ

(ՆԱՄԱԿ ՎԱՆԷՆ)

28 յունիս 1899

Անօրինակ ու կատաղի կռիւ մը տեղի ունեցած է վերջերս բուռ մը ֆէդայիներու և թշնամիին միջև։

Զինակիր խումբ մը, 18 հոգի, Խանասօրի մօտ յանկարծ կը հանդիպի հանրածանօթ Շարաֆ պէյի գունդին։

Ահն ու սարսափը կը տիրէ իսկոյն քիւրդերուն. մոռցած չեն դեռ 1897-ի ահաւոր պարտութիւնը նոյն դաշտին վրայ. և Շարաֆը՝ վախէն, անմիջապէս հեռագրել կուտայ Վան ֆէդայիներու երևալը և փութով օգնութիւն կը խնդրէ։

Վան որքան զօրք ու պաշիպօզուք կայ ճամբայ կը հանուի, աւելի քան 500 հոգի, թնդանօթներ ալ հետերնին։

Ֆէդայիները կը դիմադրեն ու կը կռուին անօրինակ քաջութեամբ, անընդհատ երեք օր ու գիշեր, և կը կարեն կ՚անցնին Խանասօրէն մինչև Պաղր-դաղ։

Թշնամին ատկէ անդին կը կորսնցնէ անոնց հետքերը, Մերինները երեք ընկեր միայն զոհ կուտան՝ Ափօ (՞)։ Կարս, Սիմոն։

Թշնամին ահագին կորուստ ունեցած է. Շարաֆի գունդէն 60, Դապաղ խանի մարդերէն 18, և բազմաթիւ վիրաւորներ։ Կռիւը եղական էր իր տեսակին մէջ։ Փոքրաթիւ խումբին յաղթական հեռացումը և վաշտ մը զինուորներու ձեռնունայն դարձը ծանր տպաւորութիւն թողեց կառավարութեան վրայ. իր հնհնուքը կ՚աւելնայ անով, որ չգիտէ թէ ուր անհետացան հայ քաջերը։ Մանրամասնութիւնները յաջորդով։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԷՆ

19/31 յուլիս 1899

Խուլ տրտունջներ. — Օրինակելի ժողով մը. — Հրատէ մը. — Սպառնացող վտանգը. — Պոլտրիարքնիս կը բողոքէ։

Բռնակալի ճիրաններուն մէջ հեծող հասարակութիւն մը չի կրնար պարզօրէն բողոքել. անոր յաւիտենական բաժինն է կամ խուլ տրտունջը կամ դաւադրութիւնը։

Պոլսի հայերուս զգացած զլե�՝ դէպի Օրմանեան՝ ամէնուն յայտնի է։ Քիչ մը զգայուն հայ մը չկայ որ նողկանք չզգայ այդ ճարպակոյտին համար։

Բայց ինչ ալ թագնուած ըլլայ մեր սրտերուն մէջ՝ մենք պարտաւոր ենք լուել, ծածկել մեր զգացածը կամ՝ ամէնէն ծայրայեղը՝ յայտնել իբր խուլ բողոք մը, իբր անձայն տրտունջ մը։

Օրմանեանին խիստ յաճախ զգացուցեր ենք ու կը զգացնենք մեր ներքին բողոքը։ „Փայտը որ վերցնես՝ գող կատուն կ'իմանայ“ կ'ըսէ առածը։ Օրմանեան խիստ աղէկ կը հասկնայ մեր դժգոհութիւնը, մեր ներքին բողոքը, որ բաւական սպառնական ձև մը ալ առեր։ Բայց ան „ոչ մարդոցմէ կ'ակնածի, ոչ Աստուծմէ կ'երկնչի“...

*

Տրտունջ, բողոք և տեսակ մը լուռ սպառնալիքները խիստ շատցան։ Ատոնց ազդեցութեան տակ մեր „զօրաւորները“ ստիպուեցան ժողով մը գումարել և որոշել որ Բ. Դրան դիմեն՝ պահանջելով կամ աղերսելով շատ մը առկախ մնացած խնդիրներու վերջնական լուծումը։

Հազիւ այս որոշումը տուեր էին, Օրմանեանի ցանած սերմերուն արդիւնքը երևաց։ Ինք ամէն բանի համար կը վազէ պալատ. իր ժողովականներն ալ իրմէ օրինակ առած են։ Երեսփոխաններէն մին իսկոյն կը թռչի պալատ և կ'իմացնէ նոր դիմումին մտադրութիւնը, քանի մը „քերթուածներ“ ալ իրմէն վրադիր ընելով։

Պալատէն եավէր մը կուգայ՝ „մենք իմացեր ենք, կ'ըսէ, որ դուք բողոքագիր մը կը պատրաստէք առկախ խնդիրներուն համար. ատոր մէկ օրինակը Դուռը պիտի խրկէք եղեր, մէկալը դեսպանական ժարմին։ Ատանկ բան մ'ընէք, որովհետև քանի մը օրէն այդ խնդիրները լուծելու համար կայսերական իրատէ մը պիտի ելլայ“։ Եւ պատրիարք ու ժողովական՝ գլուխնին խոնարհած, կը լռեն ու կը ծալլեն իրենց որոշումը... Ահա ժողովին արդիւնքը...

*

Օրեր անցան. երկար սպասելէն ետքը երևցաւ խոստացեալ իրատէն։ „Սարը երկնեց և... և մուկ ծնաւ“... Անհամբեր սպասուած իրատէն 3 կէտ կը պարունակէ. ա) Մուշի և Արմաշի վանքերու վրայ դրուած հարկերու բարձումը. բ) Կիլիկիոյ կաթողիկոսական գժբախտ խնդրին իբր թէ լուծումը և գ) բանտարկեալներու գործերուն վերաքննութիւնը։

Առաջին կէտը ընչին է և ուշադրութեան անարժան։ Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդրի մասին խիստ շատ է գրուած։ Անոր յաջող լուծման միակ արգելքը ինք Օրմանեանն էր, որ կ'ուզէր իր ճարպոտ անձին մէջ միացնել „պատրիարք Կ. Պոլսոյ և կաթուղիկոս Տաննն Կիլիկիոյ“ տիտղոսները, նախանձելով Ազարեանի փառքին։

Ներկայ իրատէն այդ հարցը կը լուծէ. կը թոյլատրէ նոր ընտրութիւն մը կատարել... Հարկաւ բեկանելով նախկին օրինական ընտրութիւնը։ Օրմանեան զգաց, որ իրեն պիտի չյաջողի այդ տիտղոսին իւրացումը, իր արգելքները ետ առաւ...

Ուրեմն այս երկու կէտերն ալ մեծ արժէք մը չունին։ Կը մնայ երրորդ կէտը՝ բանտարկեալներու վերաքննութիւնը, որով իբր թէ անմեղները ազատ պիտի արձակուին։

Այս կէտին համար ալ տեղիս ոստիկանութիւնը ամիսէ մը իվեր եռանդուն պատրաստութիւններ կը տեսնէ։ Հայերու նոր որս մըն է սկսեր. „վա՜յ, դուն դպրոցին քովէն անցար“, կ'ըսեն մէկու մը ու բանտը կը նետեն. „վա՜յ, դուն վարժապետին հետ խօսեցար. վա՜յ, դուն գործ չունիս. դուն ծուռ նայեցար, դուն ալ շիտակ“... և այլ հազարաւոր անմիտ պատճառներով պատահած հայ երիտասարդը բանտը կը նետեն։ Ոչ քննութիւն կայ, ոչ հարց ու փորձ։ Անհետևանք խուզարկութիւններ, ապարդիւն խստութիւններ որքան ուզես։ Եւ այս ամէնը կ'ըլլայ իբր նախապատրաստութիւն Վեհափառ սուլթանին մեծահոգութեան նոր ապացոյց մը տալու համար։ Օգոստոս 17/29-ին, իր արիւնոտ գահակալութեան տարեդարձին, հայ բանտարկեալներուն „ընդհանուր ներում“ պիտի շնորհուի... Մէկ հարուածով երկու որս. հայոց թէ փաթրիկին աղերսանքին լսած կ'ըլլայ, թէ սուլթանական հայրախնամ գութը աշխարհին ցոյց տուած...

*

Ոստիկանական խստութիւնները կը կրկնապատկուին. Սուլթանին համար զարհուրելի օրերը կը մօտենան։ կատաղած գազանը իր բոլոր ճիգը կը թափէ, որ նոր բան մը տեղի չունենայ։ 1897-ի ահաւոր փորձերէն ետքը տեղիս լրտեսական ժարմինին վրայ աւելցուցին 2,000 հոգի ևս. այժմ ալ որոշուած է լրտեսներու վոհմակին վրայ 1,000 հոգի ևս աւելցնել։ Եթէ ասանկ շարունակուի, քիչ ատենէն անշուշտ պիտի հասնինք „ընդհանուր լրտեսութեան“ վիճակին։ Ուրիշ պետութիւններ ընդհանուր զինուորագրութիւն կ'ընեն, արտաքին թշնամիներէն իրենց դիրքը պաշտպանելու համար, Թիւրքիան ընդհանուր լրտեսագրութիւն կ'ընէ իր ներքին թշնամիներուն դէմ կուելու...

*

Այդչափ լրտեսները բաւական չէին, լրտեսութեան նման նոր բան մըն ալ կուգայ վրան աւելնալու... ու ան ալ մեր պատրիարքին կողմէն։

Անցեալները սրտացաւ պատրիարքնիս կ'երթայ Բ. Դուռը բանտարկեալի մը ազատման համար միջնորդելու։

Փակագծի մէջ ըսենք թէ օրհնեալ սովորութիւն մըն ալ ունի Օրմանեան. „Ամէն աշխատութիւն պիտի վարձատրի“-ի սկզբունքը իր մէջ խիստ արմատացած է։ Անանկ մանր միջնորդութիւններ անգամ առանց վարձի չ'ըներ։ Ստոյգ է՝ ինքը անձամբ դրամ չ'առներ, բայց իր ազգականներէն մին կը նստի երես առ երես սակարկութեան... դրամը կանխիկ կ'առնէ և ապա Օրմանեան կը միջնորդէ... Իրողութիւններ չեն պակսիր։

Անցնինք մեր պատմութեան։ Օրմանեան այդ բանտարկեալին համար եռանդուն կերպով միջնորդած ատեն՝ բարձր կը պոռայ. „Զարմանք բան է. Շէֆիկ պէյ ասանկ անմեղները կը բանտարկէ, իսկ յեղափոխականները վզովզով կը մտնան կ'ելլեն՝ բան մը չի կրնար ընել“։ Այդ ատեն Շէֆիկ պէյ քովի սենեակը կը գտնուի ու կը լսէ Օրմանեանին խօսքերը։ „Եթէ Հայոց փաթրիկն է ատ ըսողը, կը գոչէ, Շէֆիկ բարկացած, ուրեմն ինքն ալ անոնցմէ է և կը ճանչնայ անոնք. թող ցուցնէ՝ ձերբակալեմ“։

Թերևս Օրմանեան առանց մեծ խղճահարութեան մատնէր յեղափոխականները, եթէ կարող ըլլար...

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ, 14 յունիս

Լոնդոնից մի հայ բարեկամ գրում է ինձ հետևեալ տողերը.

„Այսօր կարդացի անգլիական „Morning Leader“ լրագրի մէջ հետևեալ լուրը. „Ռուսաց կառավարութիւնը մտադիր է մօտ ժամանակներս խլել հայոց եկեղեցիների կալուածքները և իրեն սեփականացնել“: Կարդացի և սոսկացի: Միթէ՞ ճիշդ է“...

— Տարաբախտաբար ճիշդ է, պիտի պատասխանեմ ես, թէև լաւ գիտեմ որ այդ դառն պատասխանը անկարագրելի սոսկում պիտի պատճառի ոչ միայն իմ նամակագիր բարեկամին, այլև այն հազարաւոր հայերին, որոնք ողբում են հայութեան գլխին ամէն կողմից թափուող քաղաքական հարուածները, միշտ միևնոյն հարցը տալով. „Ե՞րբ պէտք է այս բոլորին վերջ տրւի“...

Այդ „վերջը“ գուշակել չեմ կարող. բայց „սկզբի“ մասին ահա մի քանի մանրամասներ:

Իսկապէս նոր բան չէ այդ հարցի սկիզբը, որ ծանօթ է „եկեղեցական կալուածքներ խլելու“ դժբախտ անունով: Առաջին անգամ ռուսաց կառավարութիւնը այդ հարցը յարուցեց դեռ Գէորգ կաթողիկոսի օրով, թէև շատ փոքրիկ ձևով: Տեղի ունեցան գրագրութիւններ, բայց խնդիրը առաջ չգնաց: Ապա՝ սրանից աւելի քան 10 տարի առաջ, 80-ական թուականներին, երբ տեղի ունեցաւ հայոց դպրոցների առաջին փակումը, այդ հարցը որոշակի ձևով կրկին յարուցեց Պետերբուրգի մէջ, բայց, քաղաքական մի քանի պատճառներով, նորից յետաձգւեց աւելի „յարմար ժամանակի“: Եւ երևի այժմ „յարմար ժամանակ“ են համարում... Դա յարուցւում է ամէն անգամ, երբ Պետերբուրգում կամ Թիֆլիզում՝ կովկասեան նախկին փոխարքայի պալատի մէջ կազմած „վարչական բարձր ատեաններում“ արծարծւում է հայերին „լուծելու“ խնդիրը: Ռուսացման սիրահարների կարծիքով, հայոց եկեղեցին մի զօրեղ պատւանդան է, որի վրայ յենւում է կովկասեան հայ տարրի ինքնուրոյնութիւնը, և հետևաբար, երբ հարկաւոր է հարուած տալ այդ ինքնուրոյնութեանը, պէտք է հանել նրա տակից պատւանդանը — հայոց եկեղեցին: Սակայն, որովհետև դաւանութեան ազատութիւնը ռուսաց օրէնսդրութեան հիմնական կէտերից մէկն է կազմում և որովհետև այդ „մեռած օրէնքով“ օրթոդոքս-Ռուսաստանը շատ է պարծենում Եւրոպայի առաջ, ուստի անհեռատեսութիւն են համարում ուղղակի դաւանական-կրօնական խնդիր յարուցանել, այլ դրա փոխարէն յարուցւում է այն հարցը, որ ես վերևը անուանեցի „եկեղեցական կալուածքների խլումը“:

Եկեղեցական կալուածքներ խլելով ռուսաց կառավարութիւնը յոյս ունի հասնել նոյն նպատակին, այն է՝ ջլատել հայ-լուսաւորչական եկեղեցու ուժը: Ի՞նչպէս: Ահա: Կովկասեան վարչութեան կարծիքով հայոց հոգևորականութիւնը կազմում է մի ահագին ուժ, ժողովրդի վրայ ներգործող մի հսկայական տարր, գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ հայոց եկեղեցին ունի անսահման կալուածքներ, որոնցից կղերը ստանում է մեծամեծ եկամուտներ, անբաւ հարստութիւն, և շնորհիւ այդ հարստութեան՝ ապահովում իր անկախ, ինքնուրոյն դիրքը: Հոգևորականութիւնը այդ անկախ և ինքնուրոյն դիրքից զրկելու համար, — մտածում է Ալեքսանդր III-ի սիստէմով ստեղծւած կառավարութիւնը, — պէտք է խլել նրանից նրա ձեռքում եղած հարստութիւնը կամ, աւելի ճիշդն ասած, այն կալուածքները, որոնք հայոց եկեղեցիներին մատակարարում են հարստութիւն: Խլելով այդ հարստութիւնը — շարունակում են պնդել Պետերբուրգի Մեսերնիները — մենք կը խլենք հայ կղերից նրա անկախութիւնը, կը դարձնենք նրան մեզանից կախւած մի մարմին, որին այն ժամանակ հեշտ կը լինի թելադրել այն, ինչ ցանկանում ենք...

Դա է գաղտնիքը...

Բայց մի „գաղտնիք“, որ, ինչպէս և ուրիշ շատ „պետական գաղտնիքներ“ Ռուսաստանում, ոչ միայն ոչինչ հիմք չունի, այլ ուղղակի արժանի է ընդունելու հեգնութեամբ և ժպիտով այն բոլոր մարդկանց կողմից, որոնք քիչ շատ ծանօթ են հարցին:

Ես ասում եմ „հեգնութեամբ և ժպիտով“, որովհետև ամբողջ հայութեան մէջ այսօր ոչ մի տարր այնքան թոյլ և կենսազուրկ չէ, որքան հայ լուսաւորչական կղերը, որ ոչ միայն ահագին ազդեցութիւն չունի հայ ժողովրդի վրայ, ինչպէս երևակայում է իր նշանաւոր „դոկլադի“ մէջ իշխան Գօլիցին, այլ և բացարձակապէս դադարել է ոևէ դեր կատարելուց: Նոյն այն դոկլադի մէջ, որ Գօլիցինը ներկայացրեց Նիկոլայ II-ին 1898 թւին, այն կարծիքն է յայտնում, որ „հայ կղերի իդէալն է միակ և միացեալ Հայաստան“, աւելացնելով որ „կղերը հայկական շարժման գլուխն է անցել“: Դա լոկ սխալանք չէ, այլ աշխարայ սուտ: Եւ նենգամիտ սուտ, որովհետև ինչքան և բոլորս վատ կարծիք ունենանք Գօլիցինի և նրա թելադրիչների մտաւոր ընդունակութիւնների մասին, բայց և այնպէս չենք կարող համոզւել, որ նրանք այնքան կոյր և տկարամիտ են, որ չեն տեսնում թէ հայոց հոգևորականութիւնը շատ վաղուց արդէն դադարել է այն դերը կատարելուց, որ նրան վերագրում է հայատեաց քաղաքականութիւնը: Հէնց այս րոպէիս հայոց մամուլը, ոչ միայն Կովկասում, ուր նա անցնում է ռուսաց ցէնզուրայի ձեռքով, այլ և Կ. Պոլսում, Եւրոպայում, Ամերիկայում — մի խօսքով աշխարհիս բոլոր ծայրերում, ուր հնչւում է հայ խօսքը, — մի գանգատ միայն ունի, այն, որ հայ կղերը տգէտ է, անգործ, պորտաբոյծ, անընդունակ դարմանելու ժողովրդի վշտերը, անկարող ըմբռնելու նրա իղձերը... Ամբողջ Թիւրքահայաստանը կրօնափոխ է լինում, քրիստոնեայ-հայը դառնում է մահմէդական. մինչև իսկ հայոց կրօնական գլխաւոր հիմնարկութեան՝ Էջմիածնի շուրջը լուսաւորչական հային դարձնում են օրթոդոքս, կաթոլիկ, բողոքական. հայ կղերը շնորհք, եռանդ չունի դիմադրելու իր „հօտի“ սպառման, իսկ Պետերբուրգի քաղաքագէտները զանազան „դոկլադների“ շնորհիւ „խիստ միջոցներ“ են ձեռք առնում, յայտարարելով որ այդ նոյն կղերը պարագլուխ է հայկական շարժման և մինչև իսկ նախապատրաստող Մեծ-Հայաստանի ամբողջական վերականգման...

Տեղն է բացագանչելու բանաստեղծի հետ՝

„Դրա կէսը, կէսի կէսը“...

Եթէ այդքան պարզ է հարցը և հայ կղերը չէ նպատակակէտը՝ ապա ինչի՞ մէջ է „գաղտնիքը“, — երևի կը հարցնի իւրաքարչիւրը իմ ընթերցողներից։ Ահա այստեղ է, որ „ապուշ է կտրում“ սառը լոգիկան, անցնելով դէպի սև-սև մտքերի աշխարհը։ Եւ ինչ կասկածներ, ինչ հրեշաւոր ենթադրութիւններ ասէք, որ չեն ծագում այժմ ամէն մի հայի գլխում այդպիսի „բարդ հարցերի“ դիմաց։ Ինչ ասէք, որ չի ստեղծում վախեցած երևակայութիւնը։

„Ռուսաց կառավարութեան նպատակն է — ասում են շատ հայեր — միացնել լուսաւորչական եկեղեցին ռուսաց եկեղեցու հետ. և այդ նպատակին հասնելու համար է, որ նա ուզում է քիչ-քիչ խլել հայոց եկեղեցական կալուածքները, որպէսզի մի քանի ժամանակից յետոյ, երբ ինքը եկեղեցին այլևս միջոց չունենայ ապահովելու հոգևորականներին, կառավարութիւնը ինքը յանձն առնի պահել—ինչպէս այդ անում է ռուսաց հոգևորականների հետ—հայոց եկեղեցու պաշտօնեաներին՝ ռոճիկ վճարելով գանձարանից. դա հնարաւորութիւն կըտայ կառավարութեանը՝ իր ձեռքի մէջ պահելու հայոց հոգևորականութիւնը, իսկ դրանից յետոյ այլևս դժուար չի լինիլ իրագործելու երկու եկեղեցիների միացման հարցը“...

Ինչպէս տեսնում էք, մի նենգամիտ ծրագիր է և այնքան հրեշաւոր, որ կարող էք նոյն իսկ անհաւատալի նկատել։ Անհաւատալի, այո։ Բայց տարաբախտաբար, շատ անհաւատալի ծրագրեր կան, որոնք բռնապետութեան շնորհիւ՝ այս դժբախտ երկրում քիչ-քիչ անցնում են „քաղաքական անհրաժեշտ միջոցների“ շարքը, որից յետոյ սկսւում են հուչակաւոր „պօլիցիական“ միջոցները՝ „բարձրագոյն“ բառի տակ սրբագործուած կարգադրութիւնները իրագործելու համար... Եւ ահա այդ երևոյթի շնորհիւ՝ կասկածոտ, ամէն բռնութիւն սպասող ժողովրդական երևակայութիւնը շարունակում է ստեղծել նորանոր լուրեր. թէ հայոց կաթողիկոսի գահը Էջմիածնից պէտք է փոխեն Պետերբուրգ, թէ այլևս կաթողիկոսական ընտրութիւն չպիտի լինի, այլ լոկ կայսեր կողմից կը նշանակուի մի մետրապօլիտ, թէ միւռոնը այլևս չպիտի օծուի Իջման տեղում, այլ Նէվայի ափերում...

Եւ այլն, և այլն, և այլն...

Անվերջ են այս տեսակ լուրերը և անթիւ։ Նրանց մեծ մասը, այո՛, ճիշդ չէ, բայց հիասթափուած հասարակութիւնը, կրկնում եմ, շարունակում է ստեղծագործել մէկը միւսի յետևից, քանի որ նրանք շատ դէպքերում լոգիկաբար բխում են կառավարութեան անտեղի կարգադրութիւններից, և մանաւանդ որ կառավարութիւնը ո՛չ մի նշանով, ո՛չ մի խօսքով և ո՛չ մի զգուշական միջոցով չի աշխատում ջրել այդ տեսակ լուրերն ու ենթադրութիւնները, թէև նրանց գոյութեան մասին իր անթիւ ագէնտների միջոցով քաջ տեղեկութիւն ունի...

Ես կողմնակից չեմ այդ տեսակ գրգռիչ լուրերի տարածելուն և սրտի խորքից ատում եմ այն բոլոր աւրիթները, որոնք թշնամութիւն են սերմանում մի պետութեան մէջ ապրող ազգերի շրջանում, բայց չեմ կարող լռել և չաւելացնել, որ եթէ զանազան Գօլիցիների հայատեաց քաղաքականութիւնը չվերանայ Կովկասից, — մօտիկ ապագայում կ'ունենանք նորանոր հարցեր, ինչպէս օրինակ եկեղեցական կալուածքների խլման հարցն է, և դեռ էլի ուրիշները։ Զպէտք է մոռանալ, որ հայոց դպրոցների փակողի և դպրոցական կալուածքները յափշտակողի համար բոլորովին դժուար բան չէ խլել նաև հայոց եկեղեցիների կալուածքները, իհարկէ միշտ յանուն մեզ ծանօթ „ռուսացման“... Միամտութիւն է կարծել, թէ ֆինլանդական ինքնավարութիւնը ոչնչացնող „պետական մարդիկ“ կը դժուարանան իրագործել այդ միտքը, թէև լաւ գիտեն, որ հայոց եկեղեցական կալուածքները անվիճելի սեփականութիւն են՝ նուիրագործուած կտակներով, օրէնքով, կայսերական հրովարտակներով կամ եկեղեցական անձեռնմխելի յիշատակարաններով։ Հայոց դպրոցական կալուածքների դէմ գործ դրուած վայրենի ապօրինութիւնները թոյլ չեն տալիս այդպիսի „բարեմիտ“ ենթադրութիւններ անել։ Հեղեղը ճանապարհ չի ճանաչում, իսկ բռնապետութիւնը՝ արդարութիւն...

— Ուրեմն՝ ի՞նչ պիտի անել։

— Մտածեցէ՛ք...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ ԿՐԷՏԷ

Ցայտնի է թէ վերջին ամիսներս Պօլսի ռուսական դեսպանը վերստին յուզած էր Կովկաս ապաստանած հայ փախստականներուն դարձի խնդիրը։ Ցունիս ամսու երկրորդ կէսին սակայն յանկարծ իմացուեցաւ թէ սուլթանը առաջարկած էր ռուս կառավարութեան՝ հայ գաղթականները փոխադրել Կրէտէ, եւ յանձնառու ալ եղած էր այդ փոխադրութեան եւ անոնց Կրէտէի մէջ տեղաւորման առթիւ ըլլալիք ծախքերն ալ հոգալ...

Խնդիրը ծանրակշիռ էր, ուստի Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինը յունիս 25-ին ստորեւ բերուած բողոքն ուղղեց Կրէտէի խնամակալ պետութիւններէն երեքին։

Նիւբպական մամուլը արձագանգ տուաւ այդ գրութեան. բազմաթիւ թերթեր հրատարակեցին անոր ամփոփումը։

Վսեմութիւն,

Ձեր Վսեմութիւնը տեղեակ ըլլալու է թէ օսմանեան կառավարութիւնը կ'առաջարկէ Կրէտէ գաղթեցնել այն 40,000 հայերը, որոնք 1895-ի ջարդերու ատեն ապաստանած էին ռուսական հողը։

Կատարելապէս անգիտակ ենք թէ Ձեր կառավարութիւնը ի՞նչ դիրք պիտի հաճի բռնել Բերլինի դաշնագրութեան տառը բռնաբարող այս պատահականութեան հանդէպ. դաշնագրութիւն մը, որ կը պայմանագրէր Թիւրքիոյ հայ բնակչութիւնը պաշտպանել իր բնակութեան սահմաններուն մէջ իսկ. ուստի կը համարձակինք Ձեր Վսեմութեան բարեհաճ ուշադրութեանը յանձնել քանի մը դիտողութիւններ, որը կը թելադրէ մեզ օսմանեան այդ չարաշուք ծրագիրը։

Ձենք ուզեր կանգ առնել խորհրդածելու թէ քանի՞ անիրաւ է միջոց մը, որ կը յաւակնի բռնադատել այդ 40,000 դժբախտները, իրենց կամքին հակառակ թողնելու քսան անգամ դարևոր իրենց երդերը և գաղթելու երկիր մը, որուն առաւելութիւնները շատուշատ վիճելի են։

Ինչ որ վերջին աստիճան կարևորութիւն ունի այս պահուս, այն է որ խնդրին այդ լուծումը, — եթէ դրժբախտաբար մեծ պետութիւններու կողմէն ընդունելու ըլլայ,—վերջնական սրբագործումը պիտի ըլլար այն գարշելի քաղաքականութեան, որով կը ներշնչուի սուլթանը բնաջինջ ընելու համար հայերը, ամէն հնարքներով, իր ասիական նահանգներու բովանդակ տարածութեան մէջ։

Գաղտնիք մը չէ այսօր թէ օսմանեան կառավարութիւնը ջարդերու սիստէմէն ձեռք քաշեց միայն՝ հայկական խնդիրը շատ աւելի նուազ վտանգիչ, բայց աւելի ապահով եղանակով մը թաղելու համար. քիւրդերն ու թիւրքերը, կառավարութեան դրդմամբ, աւելի քան երբեք կը նկրտին հայերուն տեղը բռնել, ստիպելով որ իրենց տուներն ու գոյքերը թողնեն ու փախչին։

Անօգուտ կը համարինք պնդել այս կէտին վրայ. հիւպատոսական տեղեկագրերը, իմիջի այլոց, ոչ մէկ տարակոյս չեն թողներ այդ մասին։

Ձեր Վսեմութեան լուսամիտ ուշադրութեան մատնանիշ ընելով այն աղետալի հետևանքները որ այդ չարագուշակ տնօրինութիւնը չպիտի ուշանար ունենալու Թիւրքիոյ բովանդակ հայ բնակչութեան համար, կը սիրենք յուսալ թէ Ձեր կառավարութիւնը պիտի չուզենայ սուլթանին մեղսակիցն ըլլալ Թիւրքիոյ հայերու ջնջման գործին մէջ, և պիտի հաճի պարագաներուն պատշաճ միջոցներ ձեռք առնել, վիժել տալու համար սուլթանին խորհուրդը և ապահովելու միանգամայն որ այդ 40,000 դժբախտները վերադառնան իրենց հայրենիքը և վերստանան քիւրդերու ու թիւրքերու կողմէն յափշտակուած իրենց գոյքերը։

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

Հասարակութիւնը գիտէ արդէն թէ ինչ ապարդիւն փորձեր ըրաւ Ապդիւլ Համիդ, Տատեանի միջոցով, Դաշնակցութեան հետ բանակցիլ կարենալու նպատակով։

Թիւրք քաղաքականութիւնը քիչ-միչ ճանչցող և կացութեան ալ իրազեկ մէկու մը համար լոյսի պէս ակներև էր սակայն, թէ ինչ էր սուլթանին փնտռածը։ Եթէ սուլթանը իրապէս փափագէր — ուրիշ խնդիր է թէ պիտի կրնար — իր հայ հպատակներուն հետ հաշտութեամբ մը վերջ դնել մեր շարժումին, և եւրոպական միջամտութեան մը առաջն առնել — պէտք չունէր այդ բանակցութիւններու կորանքին ենթարկելու իր անձը։ Այդ քայլն ինքնին արդէն կ'ապացուցանէր թէ Մարդասպանը պատիպատ հնար մը կ'որոնէր խոյս տալու պահանջած գոհացումը ազգին տալէ։ „Հաշտութիւնի" շանքարոզը իբր դիւանագիտական զէնք գործածելով՝ սուլթանը կը յուսար մէկ քարով երկու թռչուն որսալ. յեղափոխութեան սպառնալիքը հեռացնել մէկ,և երկրորդ՝ Եւրոպայի բերանը գոցել այդ „բանակցութիւններով", եթէ երբեք սա իր խոշոր ձայնը բարձրացնել խորհէր իր „քրիստոնեայ եղբայրներու" օգտին։

Երկու կարգի իրողութիւններ — որ առաջ կը բերենք ստորև — յստակօրէն ցոյց կուտան արդարև թէ որքան հետամուտ է Համիդը „հաշտութիւնի" լեգէնդան պահպանելու, բայց այնքան քիչ ալ հաւատք ունի անոր յաջողութեանը, որ մէկէ աւելի „ձեռնարկուներու" յանձնած է անոր իրագործումը։

*

Դաշնակցութեան մօտ սուլթանին կողմէն խրկուած երրորդ պատուիրակը՝ Տրդատ պէյ, հաղիւ ամիս մը կար որ Ժընէվ եկած էր, երբ „Դրօշակ"-ի խմբագրութիւնը, հետևեալ նամակը կը ստանար Լոզանէն, իրեն ծանօթ անձէ մը.

18 Նոյեմբեր 1898

Յարգելի՛ Խմբագրութիւն,

Երէկ, Պոլիսէն եկած մի անձնաւորութիւն, զոր արդէն կը ճանչնամ, ինձ հետ խօսակցութիւն մ'ունեցաւ մասնաւորապէս ազգային խնդիրներու վրայ։ Ինձ բացաւ իր մտածումները, իր բաղձանքները, թրքահայուն վիճակին մէջ բարեփոխում յառաջ բերելու եւ անոր ճշմարիտ պահանջներուն աստիճանաբար բայց լիուլի գոհացումին համար ամէնէն հաստատուն հիմերէն մին դնելու մասին խորհած միջոցներուն վրայ։ Ինձ ըրաւ մի կարգ կարևոր յայտնութիւններ, ըլլայ պետական կամ յեղափոխական։ Արդէն ուրիշ յեղափոխական կուսակցութեան մ'ըրած է նոյն յայտնութիւնները եւ առած է անոր հաւանութիւնը. մի եւ նոյն նպատակին համար երէկ երկոյ անմիջապէս մեկնեցաւ Մարսիլիա։ Ձեր կարևորութեան մեծութիւնը դգալով արդէն, խիստ կը փափագի իր մտածումները ու յայտնութիւնները Ձեզ ալ հաղորդել եւ ստանալ Ձեր կարծիքը կամ հաւանութիւնը։ Քաղաքական պատասխան մը չստանալէ առաջ չուզելով ժընէվ գալայլեւ այլ նկատումներով, իմ միջոցով կը խնդրէ Ձեզմէ հասկնալ թէ կը հաճի՞ք ուղուած ատեն Ձեզմէ մին ղրկել իբրեւ ներկայացուցիչ կամ իբրեւ տեղեկաբեր այստեղ Լոզան, իմ սենեակս, այս գործին համար։

„Անծանօթ" առաքելութեամբ, „անծանօթ" պարոն մը, Պոլսէն նոր եկած, կ'ուզէր Խմբագրութեան ներկայացուցչի մը հետ տեսնուի, բայց „այլ և այլ նկատումներով" ոչ թէ Ժընէվ, այլ անկէ քանի մը ժամ հեռու գտնուող Լոզանի մէջ։

Խմբագրութիւնը մերժեց այդպիսի պայմաններու մէջ տեսակցութիւն մը և հրաւիրեց „Անծանօթը" Ժընէվ գայ։

Ձայն ձուն չելաւ։ Երեք ամիս ետքը միայն առեղծուածը լուծուեցաւ, երբ Լոզանի նոյն միջնորդ անձը փետրուար 26-ին Խմբագրութեան կը հաղորդէր հետևեալ անզուգական նամակը, — որ „Անծանօթը" ուղղած էր իրեն Պարիզէն, — պարտ ու պատշաճը տնօրինել խնդրելով։

18 փետրուար 1898

Բարիս

Երկար եղաւ որ քեզ չ'եմ գրած. կսպասէի ձեռնամուխ ըլլալ՝ երբ ինքզինքս ուժով զգայի իմ գործելիք գործոյս մէջ։ Այլ եւս մօտեցած է ակնկալած ժամանակս։ Իցէ՞ թէ կարենայի օգտակար լինել այնքա՛ն ազգիս, որքան կը փափաքիմ։

Մե՛ծ է արդարեւ ազգին վէրքերն, եւ մեծ հարկ եղած դարմաններն։

Ի Պոլիս նախանձու անձինք ինձ նկատմամբ այլ ընդ այլոյ զրոյցներ կը տարածեն եղեր։ Գիտեմ ազգիւրն այդ ամէն չար լրոյ. սե՛ւ հոգինէր, միայն իբրեւանց շահն գիտեն հոգալ, ու, հետեւարար երբ անկեղծ մէկը կ'ելլայ կը գտնէ վերջապէս միջոցն հաշտեցնելոյ ազգին եւ կառավարութեան շահուցն, չարակա-

մութեամբ միայն, իւրեանց օգնութեան կը կոչեն սուտն ու մոլարը, եւ անխղճօրէն կը նկրտին անուանարկել այնպիսի մէկը որ պատրաստ է զոհել նոյն իսկ իւր կեանքն, զոհելէ վերջն իւր անձնական շահերն։ Ես անկեղծ եմ իմ գործոցս մէջ, եւ պատրաստ միշտ ապացուցանելոյ թէ երբէք խաբելոյ նպատակ չ'ունիմ։ Արդ, կը խնդրեմ գրեցէք Դրօշակի խմբագրութեան, պիտի գամ տեսակցիլ իւրեանց հետ, այլ յառաջ քան զգալն իմ անդ թող ինձ նկատմամբ աննպաստ գաղափար չը շինեն։ Ես նոցա հետ պիտի նստիմ եւ խորհրդակցիմ ի գործ դնել տալոյ համար այն միջոցներն որովք միայն կարելի կը լինի, ազգային շահերն հաշտեցնել կառավարական շահուցն հետ։ Ես մինչ ցարդ զրկուած պաշտօնէից նման նոցա խորհուրդ պիտի չըտամ. իմ ձեռքս իւրեանց ձեռաց մէջ դնելով ազգին եւ երկրին օգտիցն վերայ պիտի բանակցիմ։

Դեռ իմ գալուստս փոքր ինչ պիտի ուշանայ, շատ ուրախ պիտի լինիմ՝ եթէ հոս ունին մէկը, ինձ ցոյց տան, որպէսզի նմա հետ այժմէն կարենամ կարծեաց փոխանակութիւն ունենալ։

Կուսակցութիւնք յեղափոխականք, որ հոս են, հարկ եղածէն աւելի պատրաստ են դրօշակեանց ինձ նկատմամբ նպաստաւոր վկայութիւններ տալոյ։ Կը խնդրեմ ուրեմն, որ դուք ալ ձեր անձնական երաշխաւորութիւնն չը զլանայք։ Մէկ անգամի տեսակցութիւնն իւրեանց ներկայացուցիչին հետ բաւական է ինձ զայն համոզելոյ իմ անկեղծութեանս մասին։

Ընդառելով ձեր պատասխանին վաղընդհուպ

Մնամ Ձեզ անծնուէր բարեկամ,

(Ստորագրած) Դ. ՊՈՒԼՊՈՒԼ

„Անծանօթը" Գէորգ Պիւլպիւլեանն էր ուրեմն... անբաժան մտերիմն ու արբանեակը Պէրայի կառավարիչ Էնվէր պէյին, Պոլսի կոտորածը վարողներէն մէկուն։ Այն թշառականը, որ 1896-էն իվեր Ղալաթա Սէրայի մէջ բուն դրած, „ազգին վէրքերուն դարմանները" որոնելու դիմակին տակ, կը լրտեսէր յեղափոխական շարժումը Էնվէրի հաշուին։ Նոյն այդ պաշտօնով էր որ Էնվէր պէյ զինքը Եւրօպա կը ճամբէր 1897 մարտ 24-ին։ Պիւլպիւլեան կասկածելի տեսակցութիւններ կ'ունենար այն ատեն, Սոֆիա, „Երիտասարդ Թիւրքերու" հետ։ Տարի մը ետքն ալ, 1898 փետրուար 20-ին, Պարիզի մեր կոմիտէն Թռուցիկով կը կը նշաւակէր այդ տխուր արարածին Պարիզի մէջ ըրած շահատակութիւնները։ Գող սիրտը դող. ինչպէս ալ շուտ հազար կտոր կ'ըլլար արդարանալու. „պատրաստ է միշտ ապացուցանելոյ թէ երբէք խաբելոյ նպատակ չ'ունի"։

Սխալ դուռ զարկած էր։ Խմբագրութիւնը, իբր ամէն պատասխան, հետեւեալ երկտողը զետեղեց „Դրօշակ"-ի 1898 մարտ 31 համարին մէջ.

Դրօշակի նախորդ համարին մէջ տպուած Դաշնակցութեան Պարիզի կոմիտէի շրջաբերականէն ծանօթ քաջագործ Պիւլպիւլեան անուն մարդուկը, տեսակցութեան մը համար, անուղղակի կերպով Դրօշակի խմբագրութեան դիմում ընելու յանդգնութիւնն ունեցած էր։

Խմբագրութիւնս պատասխանելու ժամավաճառութիւնը թանկ գնահատելով, պարոնը իր ճակատագրին ձգեց։

*

Պիւլպիւլեանի միջադէպէն ետք գանք հիմա վերջադէպին։

Ինչպէս գիտենք, յարաբերութիւնները խզեցան մարտ 11-ին։ Վայրկեանը աննպաստ էր սուլթանին համար. երկու ամիս ետք Լահէ պիտի գումարուէր Խաղաղութեան համաժողովը։ Իրաւ է, սուլթանը հաւաստիք ունէր թէ ներքին խնդիրներ չպիտի յուզուին հոն, բայց ամէն պատահականութեան դէմ պատրաստ գտնուիլ ուզեց։ Գիտենք արդէն որ Տատեանի միջոցով ապարդիւն փորձեր ըրաւ յարաբերութիւնները վերսկսելու համար։ Ճիշդ նոյն միջոցին Համիդը նոր նենգութիւն մը բանեցուց. Վիեննայի Correspondenz-Büreau-ի Պոլսի թղթակցին միջոցով հեռագիր հեռագրի վրայ քաշել տուաւ եւրոպական թերթերուն՝ աւետելու համար թէ այդ բանակցութիւնները յաջող վախճան մը ունեցած էին և հայկական խնդիրը ինքնին լուծելու վրայ էր։

Առաջին հեռագիրը մայիս 1-ին էր.

„Ժընէվի կոմիտէին երեք անդամները Պոլիս ժամանած են կառավարութեան հետ վիճաբանելու հայոց վիճակը բարեւաւելու համար ձեռք առնելիք միջոցներու մասին։ Խորհրդակցութիւններն սկսած են Սրթին փաշայի եւ Պէրայի կառավարչին՝ Էնվէր պէյին հետ։ Լուր կը պտըտի թէ հայ պատուիրակները յանձնառու եղած են որ կոմիտէն հանդարտ պահելու ջանան"։

Խմբագրութիւնն փութաց հրատարակել հետեւեալ հերքումը, որ Wolff-ի հեռագրական գործակալութիւնը մայիս 4-ին փոխադրեց նախորդ լուրը տպող բոլոր թերթերուն.

„Դրօշակ"-ի խմբագրութիւնը արտօնուած է խպառ անհիմն յայտարարելու այդ լուրը, անոր համար որ Դաշնակցութեան ո՛չ մէկ անդամը նեղութիւն չէ կրած այդ կարգի գործի մը համար տեղէն շարժուելու։

Եւ դեռ վերջերս մարտ 11-ին էր, որ Դաշնակցութիւնը սուլթանի կառավարութեան իմացնել տուաւ, որ պարզապէս կը մերժէր անոր հետ մտնել այն բանակցութեան, որուն նախաձեռնութիւնը սուլթանին բացորոշ հրամանով ստացած էր նոյն ինքն Սրթին փաշան, Թիւրքիոյ արտաքին գործոց նախարարութեան խորհրդականը։

Այդ մերժումին շարժառիթները շուտով կը հրապարակուին։

Այդ հերքումը զինաթափ չըրաւ պալատը։ Մայիս 10-ին Correspondenz-Büreau-ի Պոլսի գործակալութիւնը երկրորդ աւելի եղջերաւոր սուտ մը հրապարակ նետեց.

„Այն յանձնաժողովը որ պիտի խորհրդակցի Պարիզի կոմիտէին եւ Ժընէվի երկու կոմիտէներու (°) պատուիրակներուն հետ հայոց վիճակը բարւոքելու համար ձեռք առնելիք միջոցներու մասին, կը կազմեն ներքին գործոց նախարար Մէհմուտ փաշա, արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Սրթին փաշա, թիւֆէքճի պաշի Ահմէտ Ճէլալէդդին փաշա, Պէրայի կառավարիչ Էնվէր պէյ, միջնորդ Տրդատ պէյ, եւ փաստաբան Գրիգոր էֆէնտի Պիւլպիւլեան։ Պատուիրակները, որոնք հաշտարար առաքելութիւն մը ունին կատարելիք մէկ կողմէն կառավարութեան, միւս կողմէն հայ կոմիտէներուն հանդէպ, տակաւին չեն հասած։ Ամէն երաշխաւորութիւն տրուած է Պոլսի մէջ անոնց ազատ բնակութեան համար, եւ անոնց գալու մասին բանակցութիւնները վերսկսած են"։

Նոյն օրն իսկ „Դրօշակ"-ի խմբագրութիւնը երկրորդ հերքում մը հեռագրեց ըզզակի Frankfurter Zeitung-ի և Temps-ի խմբագրութիւններուն։ Երկրորդը լռեց, իսկ առաջինը այդ հեռագիրը հրատարակեց իր մայիս 12-ի իրիկուան համարին մէջ, Թիւրքիոյ բաժնին տակ.

„Դրօշակ“-ի խմբագրութիւնը պաշտօն ունի բացարձակ եւ մեկին կերպով հերքել Correspondenz-Büreau-ի 10 մայիս տեղեկութիւնները, որոնց նայելով Ժընէվի հայ կոմիտէին պատուիրակները կը պատրաստուին եղեր Պոլիս երթալ թիւրք կառավարութեան հետ բանակցելու եւ թէ իբր անոնց գալու մասին բանակցութիւնները վերսկսած են։

Ատոնք նենգութիւններն են միայն Եըլտըզին, որ Լահէի խորհրդաժողովին նախընթաց օրը կը ճգնի մոլորել Եւրոպայի հանրային կարծիքը, հաւատացնել ջանալով անոր թէ հայկական խնդիրը կարգադրելու վրայ է իր եւ հայ յեղափոխական կուսակցութեան միջեւ“։

Չորս օր ետքը, Correspondenz-Büreau-ի Պոլսի գործակալութիւնը հարկադրուեցաւ վերջապէս իր 16 մայիս նոր հեռագրին մէջ խոստովանիլ թէ այդ բանակցութիւնները „բացասական հետեւանքի հասած էին“ եւ թէ սուլթանը Ահմէդ ճէլալէդդին փաշան պիտի խրկէ եղեր Եւրոպա բանակցութիւններ վերսկսելու համար հայ կոմիտէներու հետ։ Հեռագիրը կ՚աւելցնէր թէ սուլթանը հաղորդել տուեր է պատրիարքին թէ ինքը շատ բաներ պիտի ընէ հայոց վիճակը բարւոքելու համար... (՞՞՞)

———

Այսպէս վերջացաւ „բանակցութիւններու“ն կատակերգութիւնը, այնսինքն այնպէս, ինչպէս կը գուշակուէր թէ պիտի վերջանար։ Եթէ խնդիրը գաղտնիք մը չուներ յեղափոխականին եւ ընդհանրապէս խորհող մարդուն համար, նոյնը ճշմարիտ չէր սակայն ամէնուն համար։ Բանակցութիւնները առիթ մը կ՚ուտային անոնց աչքերը բանալու։ Կարգ մը մարդիկ — եւրոպացի թէ հայ — ապուշութիւնն ունին կարծելու թէ յեղափոխականը արեւստի սիրուն համար արիւն թափող մըն է. պէտք էր ցոյց տալ այդ մարդոց թէ յեղափոխականը իր արիւնը իբր միջոց միայն ընտրած էր իր եղբայրակիցներուն արիւնը կանգնեցնելու նպատակին համար. պէտք էր ցոյց տալ որ եթէ հայ յեղափոխականը դիմած է այդ ծայրագոյն միջոցին՝ արիւնին, անոր համար չէր որ չէր ուզեր երթայ „խաղաղ և օրինական“ ըսուած ճամբով, այլ անոր համար որ ուրիշներէն շատ և շատ աւելի կը տեսնէր իրերու այնպիսի կարգ մը հաստատուած տեսնելու, երբ կարելի ըլլար ապրել ու գործել „խաղաղ ու օրինական“ ճամբով։

Նոր առիթ մը կը ներկայանար հասկցնելու որ „թիւրիմացութիւններու“ հետեւանք մը չէ հայկական արիւներգութիւնը։ Եւ եթէ զանազան Մաղաք և Արթին փաշաներուն ներելի է որ մնան իրենց „հմտոզումներուն“ մէջ — „դիրքի և շահու“ վրայ հիմնուած „հմտոզումներ“ — բայց սիրտ ունեցող ամէն մէկ հայուն համար ժամանակ է վերջապէս հասկնալու թէ դահճին և իր զոհին միջև մէկ յարաբերութիւն կրնայ գոյութիւն ունենալ — ԿՌԻՒ։ Միայն։

ԹԵՐԹՕՆ

ԷԼ ՄԻ ԱՂՕԹԻՐ

Թ... գիւղից հիւսիս մի ժայռ է ցցւած, բարձր, այլանդակ. ոչ ոք չի բարձրանում նրա անձռնի, հպարտ կատարը. միայն գիշատիչ թռչուններն են պատառոտում այնտեղ իրենց արիւնոտ որսը կամ հանգիստ առնում երկար թռիչքից յետոյ. և անգադրում, թափառական քամին է գալիս այնտեղ փնտռելու իր մի կորուստը, որ երբեք չի ունեցել և կարծես զայրացած՝ ժայռի յամառ, դարաւոր ամրութիւնից՝ մերթ զայրոյթից մռընչալով և մերթ լալագին՝ հեռու է փախչում, գնում է մայր եթերին պատմելու իր ցաւը, որ ոչ սկիզբ ունի և ոչ վախճան։ Այս ժայռի մէջքին յենւած են մի շարք այլ բլուրներ, մի շարք այլ ժայռեր, որոնք կարծես խօսքերը մէկ արած՝ յետևից հրում հրհրում են առաջին ժայռին, որ շարժեն, տեղահան անեն։ Սակայն անհոգ է առաջին ժայռը, և որպէս մի հսկայ, որ իր մեծ ուժի գիտակցութիւնն ունի, մէջքը դէմ է տուել ամէնքի թափին և անսպառ համբերութեամբ պահում է նրանց անվերջ, յաւիտեան։ Կարծես նա գիտէ, որ առանց իրեն հազարաւոր ժայռեր մէկ մէկի վրայ դէպի վար, դէպի Թ... գիւղը կը թափուեն և շեղջակոյտերի տակ կը ծածկեն բոլոր բնակիչներին, որոնք նրա ուժի վրայ վստահացած հաստատուել են նրա ստորոտում։ Կայծակն է ճայթում նրա կատարին, շանթի բոցերն են լիզում գլուխը, կարկուտն է թափւում, անձրևը ողողում, խստաշունչ ձմրանը ահեղ փոթորիկն է անհասկանալի կատաղութեամբ աշխատում շարժել, գլորել նրան,—բոլորն էլ իզուր... Տարիները գլորւում են տարիների յետևից և ժայռն այնտեղ է միշտ — անխախտ, անսասան, սևացած, մռայլ, անձռնի դիրքով, որպէս ծեր հսկայ, որ մէջքին դրած ահագին բեռի ծանրութիւնից միայն նօթերն է կախել, յօնքերը կիտել։ Շոգ ամրանը, երբ կենդանիներն ու մարդիկ տօթից խեղդւում են, երբ զով քամիները կարծես խռոված փախուստ են տալիս խանձւած երկրից և արևը վերից իր կիզիչ շողերով կրակ է մաղում ամէն կողմ, ժայռի ստորոտում խիստ ախորժելի ստուեր է լինում։ Այստեղ շատ մօտ է տէր Սարգսի տունն ու իր կալը, ծերունի քահանան ժայռի ստուերում սիրում է հանգիստ առնել կալում էրան անելուց յետոյ։ Ցաճախ այդ ժամերին հաւաքւում են այստեղ ռէսն ու միւս գիւղացիները և խօսում իրենց աշխատանքներից, իրենց ցաւերից, հոգսերից։ Թ... գիւղն այցելող բէգերն ու շէյխերը իրենց խուլամներով և տաճիկ պաշտօնեաները իրենց զափթիէներով ամառ ժամանակ այս ժայռի զով ստուերումն են հանգիստ առնում և հիւրասիրւում։ Նրանց ձիերն էլ այնտեղ տեղ ունեն ժայռի մէջ. ո՞վ գիտէ ե՞րբ և ո՞ւմ ձեռքով փորւած են կանթեր, որոնցից կապում են ձիերը։ Տարիների ընթացքում ինչե՞ր է տեսել և լսել այս ժայռը, և սակայն լուռ է...

Դարձեալ ամառ էր, դարձեալ շոգ-կրակ, բայց կալերում կենդանութիւն չէր երևում և ժայռի ստորոտում ոչ ոք չկար։ Գիւղի փողոցներում էլ մարդ չէր երևում. այդ օրը գիւղացիք ամէնքն էլ եկեղեցումն էին։ Ծամաւորները մեծ ու փոքր, մարդ ու կին շրջապատել էին երկու նաշեր և տէր Սարգիսը թաղման կարգն էր կատարում։ Վեց ամիս առաջ էր ընդամէնը, որ Մուրօն ու Նալօն բանտ տարուեցան, և այժմ նրանց բանտից դուրս բերեցին մեռած։ Ասում էին, որ հիւանդացել են ու մեռել։ Բայց ինչո՞ւ էին բանտ տարել, այդ մարդ չիմացաւ, ոչ զոհերը և ոչ նրանց հարևանները։ Մարդիկ չհետաքրքրուեցին նրանց վիճակով, ամբողջ գիւղում միայն Թաթուլն էր, տէր Սարգսի տղան, որ կընճռեց իր ճակատը, կրծոտեց իր շրթունքները, մի փոքր

դէս ու դէն ընկաւ, և միայն այսքան, ինչպէս ցանցում բռնուած թռչուն, որ թռչկոտում է, ելք է փնտռում և իր ճիգերի անզօրութիւնը տեսնելով, հանդարտւում, լռում։ Դեռ փոքր հասակից գիւղացիք Նրան „նադինջ“ Թաթուլ կոչեցին, որովհետև գիւղում կատարուած յաճախակի անարդարութիւնները զայրացնում էին Թաթուլին, և երբ մէկին թակում էին և կամ բանտարկում, երբ կողոպտում էին կամ անպատիւ անում, Թաթուլը կրծոտում էր շրթունքները, և մռայլւում... Թաթուլը գիտէր, որ մի բան պէտք է անել, որ այդպէս չի կարելի, բայց թէ ի՞նչ, այդ էր, որ նա դեռ չգիտէր։

Այսօր այդ „ին՞չը“ կարծես Նրա համար լուծւում էր. նա մռայլ էր, մտաղբաղ և յափշտակուած։ Նա կրծոտում էր շրթունքները և մոռանում էր նոյն իսկ ժամանակին խնկարկել, բուրվառը շարժել։ Նա նայում էր մեռելների դէմքերին մի այնպիսի յամառ ուշադրութեամբ, որ կարծես թէ իր ճակատագիրն էր կարդում այնտեղ։ Նավոյի և Մուրոյի դէմքերը նման չէին ոչ մի մեռելի դէմքի. սրանց արտայայտութիւնը անօրինակ էր, անհասկանալի, բայց բազմախորհուրդ։ Թաթուլն աշխատում էր հասկանալ այդ արտայայտութիւնը, աշխատում էր խորը թափանցել ընդմիշտ բաց մնացած Նրանց աչքերի մէջ։ Թաթուլի համար դրանք երկու դէմքեր չէին, այլ երկու խորհրդաւոր հանելուկներ, որ նա լուծել էր աշխատում... Ահա թէ ինչու նայում էր և մոռանում խնկարկել։ Նրան թւում էր, որ Մուրօն և Նավօն փչել են իրենց վերջին շունչը առանց ասել կարողանալու ինչ որ զարմանալի բաներ, որ միմիայն իրենք գիտէին և որ կ'ուզէին ասել Նրան Թաթուլին, ասել Թ... գիւղին, ասել նոյնիսկ ամբողջ աշխարհին։ Երկու դէմքերն էլ կարծես թէ մի երկու ժամի կեանք էին խնդրում, որ խօսեն, գուրս թափեն սրտերի թոյնը, պատրաստ այնուհետև հազար մահով մեռնելու։ Թաթուլը չէր ուզում, որ այդ գաղտնիքը գերեզման իջնի, ծածկւի յաւիտեան. նա շարունակում էր նայե՛լ, նայե՛լ... Մի րոպէ Նրան թւաց նոյնիսկ, որ Նավոյի շրթունքները շարժւեցին, որ նա բաներ շշնջաց. Թաթուլը տեսաւ մինչև անգամ, որ մեռելի գլուխը շարժւեց, բարձրացաւ, սրտի սաստիկ տրոփիւնով մոռացած և իր բուրվառը, և յուղարկաւորների բազմութիւնը, նա խորին յուզմունքով առաջացաւ, մի փոքր կռացաւ դէպի մեռելը, որպէսզի լաւ լսի մեռելի զարհուրելի պատմութիւնը, բայց հէնց այդ րոպէին հայրը զայրացած գոչեց.

— Թաթուլ, ի՞նչ է պատահել քեզ, բուրվա՛ռը։

Նա յետ յետ քաշւեց. մեռելների դէմքերն անշարժ էին, գլուխներն իրենց տեղերում. նա շարժեց բուրվառը, բայց բոլորովին հակառակ կողմը։ Այս բանը ևս առաւել ապշեցրեց ամէնքին։ Տէրտէրը վերջին աւետարանն էր կարդում և մեռելների հակառակ կողմն անցաւ։ Թաթուլը գոհ եղաւ, այժմ շատ մօտիկից կարող էր դիտել Նրանց դէմքերը և... Նայում էր... Նավոյի յօնքը ջախջախուած, կապտած էր, Մուրոյի աչքի տակ կար մի մեծ կապոյտ նշան, իսկ բաց մնացած աչքերը արտևանունքներ չունէին, փետուած էին։ Մուրոյի վերին շրթունքը պատռուած էր և նրա բացուածքից երևում էին ընդերքը փշրուած ատամներով։

Դէմքերն այժմ էլ լուռ չէին։ Նրանք խօսում էին աչքերով, յօնքերով, շրթունքներով, պատմում էին Թաթուլին սարսափելի բաներ... Այժմ նա գիտէր, թէ ի՞նչ է նշանակում այդ տարօրինակ արտայայտութիւնը, որ ոչ մի ուրիշ մեռելի դէմք չի ունեցել։ գիտէր Մուրոյի և Նավոյի գաղտնիքը, որ էլ գերեզմանը ծածկել չէր կարող, գիտէր թէ ի՞նչ է նշանակում տաճկական բանտ, տաճկական արդարադատութիւն...

*

Թաղումը վերջացաւ։ Կալերում աշխատանքը վերսկսւեց։ Ճաշ էր։ Թաթուլն ու հայրը պատրաստւում էին հէշան անել. երկու դէզերի առաջ հայր և որդի մի փոքր վիճեցին. մէկն առաջարկում էր փոքրը քանդել միւսը դէպի մեծն էր դիմում. տէր Սարգիսը առարկութիւն չէր սիրում, ուստի երկմտէնը ձեռքին առաջացաւ դէպի մեծ դէզը. Թաթուլը այդ րոպէին մի այնպիսի շարժում արեց, որ կարծես կամենում էր արգելել հօրը մօտենալ մեծ դէզին. յետոյ մի րոպէ կանգնած մնաց մտաբաղ, յանկարծ ձեռքով մի ջղոտ շարժում արեց և մի խիստ որոշում կայացրած մարդի յանդգնութեամբ հաստատ քայլերով ինքն էլ մօտեցաւ միևնոյն դէզին։

Հայր և որդի միաժամանակ տնկեցին իրենց երկմտէնները մի մի խրձի մէջ, վեր բարձրացրին և միաժամանակ, ասես սառած, կանգ առան առանց կարողանալու խրձերն այս կամ այն կողմը ձգել... „Տէ՛ր, մրմընջաց տէրտէրը, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն“. ապա նա ձգեց խուրձն ու երկմտէնը, սաստիկ սպրդնած յետ յետ քաշւեց՝ սարսափած նայելով այն խոռոչին, որ բացւել էր դէզի վրայ երկու խրձերի վերցնելուց յետոյ, կարծես թէ ահաւոր օձեր էին բուն դրել այնտեղ... Յետոյ կրկին առաջացաւ դէպի դէզը և, զգուշութեամբ, ոտների ծայրերի վրայ, կարծես թէ վախենալով զարթեցնել շրգի ձեռքից մնջած միջատներին անգամ։ Մէկ էլ նայեց դէզի խոռոչի մէջ, նրա շունչը բռնւում էր յուզմունքից. նա գլուխը բարձրացրեց և հօր ու որդու հայեացքներն իրար հանդիպեցին։ Մի փոքր ժամանակ Նրանք լուռ նայում էին իրար։ Որդին համարձակ, իսկ հայրը սարսափած։ Այնտեղ, դէզի խոռոչի մէջ, արևի կիզիչ շողերի տակ փայլփլում էին մի քանի հրացանների փողեր. հայրը ձեռքը մեկնեց դէպի այդ սարսափելի խոռոչը և սղմած ծնօտների միջից գոչեց.

— Սրանք... դո՞ւ...

— Ե՛ս...

— Հա՞րը քեզ կապեց, խե՞լքդ յանկարծ թռաւ, թէ Աստուած անիծեց քեզ և իմ օջախն էլ։

— Ո՛չ հարը կապեց, ոչ խելքս է թռել, ոչ Աստուած անիծեց մեզ և մեր օջախը։ Այս գործի համար Աստուած թէ անիծի...

— Ապա ի՞նչպէս այդ ամէն բաներն ընկան տէր Սարգսի կալը, աշխարհում էլ տեղ չկար, որ սատանան խրատեց քեզ։

— Հա՛յր, տեսա՞ր դէմքերը...

— Ի՞նչ դէմքեր։

— Տեսա՞ր Մուրոյի և Նավոյի դէմքերը։

— Հա՛, տեսայ երկու մեռելի դէմք. Նրանցից առաջ էլ շատերն եմ տեսել, այսուհետև էլ կը տեսնեմ ուրիշները. ոչ ոք անմահ չէ։

— Հա՛յր, մեռել էլ կայ, մեռել էլ. այս երկուսը մեռած չէին։

—Մուրօն ու Նավօն, չէ՞ որ բանտից մեռած բերին նրանց։

—Այո՛, բանտից բերին, բայց նրանք մեռած չէին։ Նայեցէ՛ր դէմքերին. նրանք խօսում էին, և ես լսեցի նրանց ասածները, երբ բուրվառ էի ձգում։ Նրանք բաներ փսփսացին և ես հասկացայ, և ի՜նչպիսի բաներ... վա՛յ նրանց, որոնք չեն լսի։ Նրա՛նք ինձ ասացին, ա՛ռ հրացաններ և տուր ամէնքին, ով գլխին կրում է քօլօզի մի կտոր, ով որ կնիկ չէ, ով որ իր կրծքի տակ քարի փոխարէն մի սիրտ է կրում զգալու ընդունակ, որ ուրիշի լացը լսելիս մորմոքալ գիտէ, կսկծալ գիտէ. որ խուլ չէ և լսում է իր շուրջը հնչուող աղէխարշ ձայները, որ կոյր չէ և տեսնում է, թէ ինչե՞ր են կատարւում այժմ մեր սև երկնքի տակ։ Եւ ես առա՛յ այս զէնքերը, ե՛ս, քո որդին... Անիծի՛ր ինձ, եթէ կամենում ես. հօր անէծքը զարհուրելի է, բայց այս մեր վիճակն էլ անուն չունի։

Մի փոքր ժամանակ լռութիւն տիրեց։

—Ես չեմ անիծի քեզ, որդի, ասաց տէրտէրը, մի փոքր հանգարտւած, տեսնելով որդու յուզմունքը... Ես չեմ անիծի. իմ շրթունքներից անէծք չի դուրս գայ, այլ միայն աղօթք. այժմ էլ կ'աղօթեմ քեզ և բոլոր աշխարհի համար։

—Աղո՞թք, ի՞նչ եղաւ քո աղօթքը, երբ փշրում էին Նավօյի ատամները, երբ ջարդում էին նրանց յօնքերը, փետում արտևանունքները. մնացածը բանտի պատերից հարցրու։ Ո՛չ, հայր, ես էլ չեմ աղօթի, այս ձեռքը էլ երբեք բուրվառ չի ձգի, այս շրթունքները էլ երբեք աղօթք աղաչանք չեն արտասանի, իմ կրծքից երբեք էլ հառաչանք ու հեծեծանք չի դուրս գայ, այս սև ժայռը, մեր անարգանքի, մեր ստրկութեան, մեր ցաւ ու հոգսերի այս դարաւոր վկան էլ երբեք իմ բերանից չի լսի մի բառ, որ ամօթ բերէր մի տղամարդի։ Այսուհետև աղօթքի փոխարէն այսպէս պիտի գործեմ ես, և եթէ այս հաճելի չլինի Աստծուն, ես կը բողոքեմ նրա դէմ անգամ, ես կը գոչեմ աշխարհովս մէկ, թէ արդարութիւնը երկնքից չի գալիս, թէ անարդարութեան, չարագործութեան՝ նիւթող, հովանաւորող է Աստուած... Բայց այդ անկարելի է. ես համոզւած եմ, որ երկինքն էլ կ'օրհնի իմ ճանապարհը...

—Լսի՛ր ինձ, որդի. ես ծեր եմ, փորձւած, իսկ դու ջահիլ ես ու անփորձ, և խօսացածներդ չարի թերադրութիւն են։ Հայ քրիստոնեան նման է այս ժայռին. անօրէնները փոթորիկներն են, որ կ'անցնին նրա կատարով առանց խորտակել կարողանալու նրան։ Հանգիստ եղիր և աղօթիր Աստծուն. իսկ այս բաներն հէնց այս գիշեր այնպէս անյայտացրու, որ աշխարհում ոչ ոք չլսի քո ոտնաձայնը։

—Հէնց այս գիշեր ես կը հեռացնեմ նրանց, բայց իմացիր, որ ինձ էլ այլևս չես տեսնի... Ես կ'երթամ այնտեղ, ուր հոսում է արիւն, ուր թափւում է արցունք և ուր թշւառ մարդը ծանր հարւածի տակ միայն չի աղաչում, հապա նաև բողոքել գիտէ, կռւել գիտէ, կը գտնեմ ձեռներ, որ մահի հետ միասին այս մահի գործիքն էլ բռնել գիտեն։ Եւ երանի թէ երբեք երբեք չյիշես ինձ...

Եւ նոյն գիշերը հեռացաւ Թաթուլը։

*

Մի ամբողջ շաբաթ էր, որ Հաքքի բէգը ժայռի ստւերում վայելում էր տէր Սարգսի ճոխ սեղանը։ Նրա սովորութիւնն էր ամէն ամառ մի քանի օրով „հիւր" գալ իր „քիրւա քէշիշին"։ Բայց երբեք այսքան երկար չէր մնացել։ Այս հանգամանքը չարագուշակ էր թւում թէ՛ քահանային և թէ գիւղացիներին. ամէնքը վախենում էին տէրտէրի աղջիկ Գոհարի համար, որի գեղեցկութեան հռչակը տարածւած էր շրջակայքում։ Տէրտէրն աղօթքի մրմունջները շրթունքներին աշխատում էր ամէն կերպով գոհ անել բէգին, և նա յոյս ունէր։ Էլի մի քանի օր անցաւ, և մի երեկոյ նա տուն մտաւ երերալով, ուժասպառ, և երբ գիշերն ամէնքը քնեցին, նա երկա՛ր, երկա՛ր աղօթեց. նրա ծեր աչքերից հոսում էին դառն արցունքներ, նա հեկեկում էր երեխայի պէս։

—Ինչո՞ւ ես արտասւում, հարցրեց տիրուհին, չլինի՞ Թաթուլին...

—Երանի՜ թէ իմ արցունքները միայն Թաթուլի պատճառով լինէին, կնիկ։ Աստծու պատիժը վրայ է հասել մեզ, բէգը...

—Բէգը, ի՞նչ։

—Գոհարին է ուզում... թէ չէ, ասում է... գիւղը կ'աւերեմ, կրակ կըտամ։

—Կուրացէք աչքեր, խլացէ՛ք ականջներ, այս էլ պիտի տեսնէի, այս էլ պիտի լսէի, սրա՞ համար եմ ապրում, և կինը երկու ձեռքով խփեց գլխին ու կռացաւ։

—Կնիկ, ճար չկայ, անօրէն գազանը կ'անի, ինչ որ ասում է. ես աղաչեցի, արիւն-արցունք թափեցի, ձեռքերը համբուրեցի, այս ճերմակ միրուքս ու մազերս նրա ոտների փոշու տակ տրորեցի, բոլորն իզուր։ Գիւղը կը կոտորեն... Օ՜ֆ, Աստուած, ո՞ր մեղքիս համար...

Լռութիւն տիրեց։

—Ես արթուն եմ, հայր, գոչեց Գոհարը յանկարծ։ Ես բոլորը լսեցի. բէգն ուզում է ինձ... Սև՜, սև՜ օր, սեւա՜ւոր գլուխ...

Ապա նա վեր ցատկեց անկողնից կիսամերկ, ձգւեց իր ամբողջ սիրուն հասակով, որ գծագրւում էր կիսախաւարի մէջ ինչպէս մի զայրացած ոգի, և շարունակեց.

—Հա՛յր, գթոտ եղիր. ասա՛ ինձ գոնէ, ո՞ւր է իմ Թաթուլը, ո՞ւր է իմ եղբայրը. չէ՞ որ եղբօր հզօր ձեռքը պիտի պաշտպանի քրոջ պատիւը, ո՞ւր է այդ ձեռքը. զո՞ւր է ուրեմն, որ խեղճ քոյրերը ջիւան եղբայրների արևոտն են երդւում, նրանց ցաւն առնում, նրանց գլխով պտոյտ գալիս... Այս իմ սև օրին ո՞ւր է Թաթուլը, ո՞ւր է իմ եղբայրը, դու գիտես չէ՞, հայր։ Ա՜խ, քանի՞ անգամ ես քեզ հարցրել եմ, քեզ աղաչել, պաղատել եմ, և դու միշտ լռել ես։ Չէ՞, նա այստեղ լինէր, բէգն ինձ չէր տանի։ Նա չէր տայ, չէր տայ։ Դէ՛, գոնէ հիմա ասա՛, անխիղճ հա՛յր, ո՞ւր է Թաթուլը...

Հայրը լսում էր դատապարտւածի պէս։ Աղջիկը կրակ կտրած խօսում էր ու խօսում. աչքերից թափւում էին արցունքները, բայց միայն վշտի, յուսահատութեան նշան չէին նրանք, նա արտասւում էր նաև զայրոյթից, կատաղութիւնից։

—Էլ ոչինչ չունեմ ես, շարունակեց աղջիկը, ոչինչ, ոչինչ... Եղբայրս ձգեց ինձ անտէր, անպաշտպան, հայրս անզօր է անօրէն բէգի առաջ։ Սևաւո՛ր աղջիկներ, պատիւ էք պահում ո՞ր օրւայ համար. կամ ելէ՛ք միասին ձեռք ձեռքի բռնած սև ժայռի կատարից ներքև գլորւենք, կամ թէ չէ գնանք բէգերին գտնենք, չէ՞ մեր պատիւը

նրանց է պատկանում, երբ հայրեր, եղբայրներ ձգում են մեզ անտէր։ Ես առաջինը գնում եմ բէգին...

Եւ նա արագ քայլերով դէպի դուռը գնաց, բացեց և դուրս գնաց անյայտացաւ խաւարի մէջ։ Երկու ծերերի լացը հնչեց խրճիթում։

*

Միւս առաւօտ սարսափած գիւղը լսեց գիշերւայ անցքը—Գոհարի անյայտանալը։ Քահանան կապուած էր ժայռից, որովհեաև Թագցրել էր աղջկան։ Ժայռի ստորոտից նա մարած աչքերով դիտում էր, թէ ի՞նչ է կատարւում թշւառ գիւղի գլխին... Ողբ ու լաց, անէծք ու աղաղակ պատել էր գիւղը։ Թալանն սկսուած էր. քահանան էլ չէր արտասւում, այլ մտածում էր. նա չէր աղօթում, այլ անիծում էր։ Նա կ'ուզէր այժմ Թաթուլին տեսնել, միայն Թաթուլին, այն փայլուն հրացաններով, այն բոցոտ աչքերով, այն ահաւոր յօնքերով։ Բայց Թաթուլը չկար ու չկար։ Ո՞վ էր մեղաւոր—ինքը, միայն ինքը։ Ապա նա սկսեց մտածել, թէ Թաթուլը մոռացած չի լինի հայրենի օջախն ու գիւղը, այդ անկարելի է։ Ա՜խ, թէ իմանար, ինչ է կատարւում այստեղ, նա կը գար, կը գար ինչպէս մի արծիւ։ Նրա աչքերը դառնում էին ակամայ դէպի այն կողմը, բլրի վրայ, ուր ոլոր մոլոր մի ճանապարհ ձգւում էր գիւղից վեր վեր։ Նայում էր և սպասում։

Բէգն եկաւ, նրա ջանքերն իզուր էին անցել Գոհարին գտնելու համար։

— Ո՞ւր է Գոհարը, որոտաց նա։

—Բէ՛գ, քեզ ասացի, որ նա ինքն է փախել։ Բէ՛գ, մենք տարիներով աղ ու հաց ենք կերել միասին, իմ տունը, իմ օջախը քո առաջ բաց է եղել. լսի՛ր ինձ, այդ աղ ու հացը ոտի տակ մի՛ տուր. բէ՛գ, վատութիւն մի՛ արա մեզ հետ. վերև նայիր, Աստուած կայ այնտեղ, կրօններս տարբեր է, չէ՞ միևնոյն Աստուածն է դատելու ամէնիս։

— Ժամանակները փոխուել են... ո՞ւր է Գոհարը։

—Բէ՛գ, իմ ծերութեանը խնայիր, հանգիստ թող գիւղը, կամ աւերիր միայն իմ տունը, անարատ թող իմ պատիւը. բէ՛գ, վերջին անգամ աղաչում եմ քեզ, բէ՛գ, Աստուած...

— Մեր Աստուածն ու ձերը մէկ չէ, ասա՛, ո՞ւր է Գոհարը, շո՛ւտ, թէ չէ... և նա վրայ վազեց ծերունուն՝ բռունցքները սեղմած, ատամները կրճտացնելով։ Այժմ նրանք շատ մօտ էին իրար. նրանց շունչը հասնում էր միմեանց դէմքին. մի առժամանակ լուռ նայում էին իրար... Լռութիւնն ընդհատեց քահանան։

—Բէ՛գ... բայց նա չկարողացաւ շարունակել, և ուժգին թափով թքեց բէգի երեսին։ Սա անըսպասելի և սարսափելի էր բէգի համար։ Նա ակամայ յետ յետ քաշւեց, ինչ որ հրամաններ արձակեց, և իսկոյն մի քանի քրդեր շարուեցին քահանայի առաջ, փոքրիկ տարածութեան վրայ։ Քահանան հասկացաւ, որ մահը մօտ էր։ Նա մէկ էլ բարձրացրեց գլուխը, նայեց այն ճանապարհին... Մի՞թէ նա մեռնում էր առանց Թաթուլին տեսնելու. մի՞թէ նա գալու չէր։ Ճանապարհի վրայ ոչինչ չկար, բացի մի թուխպ ամպ, որ հանդարտ իջնում էր բլրի կատարից. ամպ էր իրաւ, թէ փոշի, և ինչո՞ւ չէր կարող հէնց այդ ամպը Թաթուլը լինել, մտածեց քահանան։ Մի հնար, մի հնար մի քանի ժամ էլ ապրելու համար, մտածում էր նա, միայն մի քանի ժամ, գիտեմ Թաթուլն է, նա չէր կարող մոռանալ իր օջախն ու գիւղը։ Ծանր էր նորից շնորհ խնդրել բէգից, բայց ճար չկար։

— Բէ՛գ, ասաց նա, մահից չեմ վախենում, դու էլ ոչինչ չթողիր ինձ աշխարհում, որից բաժանուելը ծանր լինի։ Թող ինձ միայն, որ աղօթեմ, վերջին անգամ աղօթեմ։

— Աղօթի՛ր։

— Եւ նա սկսեց աղօթել։ Նա աղօթում էր և նայում այն ճանապարհին, որտեղից արագութեամբ իջնում էր փոշու ամպը... Աղօթքի իւրաքանչիւր բառը նա արտասանում էր առանձին հանդարտութեամբ, առանձին դանդաղութեամբ, աշխատելով որքան կարելի է շատ ժամանակ վաստակել, շատ ապրել։ Իսկ փոշու ամպն իջնում էր հա՛ իջնում։ Առաջին անգամն էր, որ տէր Սարգիսն աղօթում էր ո՛չ Աստծուն. առաջին անգամն էր, որ նա իր աղօթքը գործիք էր դարձրել և պարարստում էր վրէժխնդրութեան մի արիւնոտ գործ։ Իսկապէս այսօր նա աղօթք էլ չէր ասում, այլ բառե՛ր, բառե՛ր, անիմա՛ստ բառեր, որոնք միայն ժամանակ էին նշանակում, և ուրիշ խորհուրդ, ուրիշ պարունակութիւն չունէին. հնչիւնները դարձել էին վայրկեաններ, բառերն րոպէներ, աղօթքը՝ ժամ, ժամանակ և ուրիշ ոչինչ։ Նա կ'ուզէր, որ իր աղօթքը այսօր վերջ չառնի։ Քանի՞ անգամ վերջացաւ աղօթքը, քանի՞ անգամ նորից վերսկսեց և շարունակեց նոյն դանդաղութեամբ։

Արևը մայր մտաւ. երեկոյեան մառախուղն իջաւ երկրի վրայ. արևելքում փայլեց լուսնի եղջիւրը, նրա պաղ շիթերն ընկան երկրի վրայ ձևացնելով մռայլ ստուերներ. ընկան նաև թշւառ գիւղի և այն ժայռի վրայ, որի ստորոտում կատարւում էր ոճիրը։ Դահիճների համբերութիւնը հատաւ։

— Բաւական է, գոչեց բէգը, այժմ վերջին անգամ ասա՛, ո՞ւր է Գոհարը։

Տէր Սարգիսը պատասխան չտուեց։ Նա յուսահատ էր և սպասում էր մահուան. Թաթուլը չկար։ Բէգը նշան արեց և քրդերն իրենց հրացաններն ուղղեցին նրա կրծքին. բայց յանկարծ ամէնքը կանգ առան. վերևից, ժայռի կատարից՝ լսուեց մի ձայն։

— Գոհարն այստեղ է, բէ՛գ, ե՛կ ու տար։ Տե՛ս, ես այստեղ եմ. ի՞նչ ես ուզում այդ խեղճ ծերունուց, ա՛յ անամօթ շուն...

Ամէնքը նայեցին դէպի վեր։ Այնտեղ, ժայռի ամէնաբարձր կէտում, լուսնի շողերի տակ, գծագրւում էր մի կանացի չքնաղ մարմին։ Նրա միակ ծածկոյթը իր ըսպիտակ կտաւէ շապիկն էր, որ ծածկում էր նրա մերկութիւնը մինչև սրունքները։ Սև երկայն մազերը ցան ու ցրիւ փռուած էին ուսերի և թիկունքի վրայ և երեկոյեան հովը խաղում էր նրանց հետ։ Նա կանգնած էր այնտեղ, ինչպէս երկնքից իջած մի հրեշտակ, որ այդ բարձրութիւնից դիտում էր, թէ ի՞նչ անլուր ոճիրներ է կատարւում այնտեղ ներքևում՝ աշխարհի վրայ։ Մարդկային վայրագութեան այդ սև գործերից նա այնքան բարձր էր, որքան սրբութիւնն ու անմեղութիւնը բարձր է ապականութիւնից, որքան առաքինութիւնը բարձր է ախտերից։ Այդ բարձրութեան վրայ նրան չէին կարող հասնել ներքևի ցեխն ու աղտեղութիւնը. նրա սուրբ պատիւը շատ վեր էր կանգնած

լկտի բէգերի բոլոր գարշութիւններից։ Բէգը նայեց նրան և աչքերը վառեցին բորբորիտ բոցով, այդ չքնաղ պատկերը ժամ առաջ տիրելու անյագ տենչով։ Նա կ'ուզէր այդ ժամին դառնալ ծխի մի պտոյտ, վերև բարձրանալ և փարել աղջկան, կամ թևեր ստանալ թռչել վե՛ր վե՛ր, ճախրել նրա գլխով, ապա խլել և փախցնել։ Նա մոռացաւ ամէն բան — և՛ քահանային, և՛ գիւղի թալանը, և՛ ժայռի բարձրութիւնից լսւած ծանր անարգանքը, ու չքնաղ պատկերով գիւթւած՝ նայում էր գէպի վեր, անկարող լինելով հայեացքը հեռացնել։

Դեռ նախորդ գիշեր տանից խոյս տալով Գոհարը վազեց դէպի լեռները, և ամբողջ գիշերը ճանկռելով ժայռերը՝ իր կուսութիւնն ու պատիւը հասցրեց այս բարձրութեան վրայ, ժայռի կատարը, մօտիկ երկնքին։ Ամբողջ ցերեկը նա ծածուկ դիտում էր այնտեղից, թէ ի՞նչ է կատարւում գիւղում։ Երեկոյեան երբ տեսաւ, որ բէգը իր հօրը սպանելու է, սարսափելի որոշում տւաւ — ձայն տալ, յայտնել իր թագստի տեղը, իսկ երբ բէգի մարդիկը գան բռնելու իրեն, ձգւել այս ժայռի կատարից դէպի վար, և իր մահովը փրկել հօրը մահից։ Եւ ահա նա այժմ կանչում էր բէգին, որ գայ տանի իրեն։

Զորս հինգ քրդեր, խմբից բաժանւելով, դէպի բլուրները դիմեցին, բայց մի քանի րոպէ յետոյ հևալով յետ եկան, գոռալով բէգին, որ փախչեն, հեռանան, որովհետև գիւղը լեցւել է ջան-ֆէդայիներով։

— Կրա՞կ, որոտաց բէգը, կրա՞կ — և նոյն վայրկեանին հրացանները որոտացին ու մի քանի գնդակներ թռան դէպի ծերունի քահանան...

Լսւեց յետևից մի այլ խմբի հրացանների որոտ, մի քանի քրդեր գետին ընկան, և ժայռի ստորոտում կատաղի կռիւ սկսւեց... Թաթուլն էր իր խմբով։ Նա կատաղի էր, և անհնայ։ Քրդերից ոմանք փախուստով ազատւեցին, ոմանք էլ ընկան վիրաւոր կամ մեռած։ Բէգը նոյնպէս ընկաւ։

Թաթուլը մօտեցաւ ժայռին սիրտն արիւնով լի, տեսաւ ժայռից կախւած հօր դիակը և փարեց Նրան դառն արտասւելով։ Սակայն ծերունին շնչում էր դեռ ևս. նա բացեց աչքերը, ճանաչեց որդուն և մեղմիկ շշնջաց.

— Էլ... մի՛... աղօթի՛ր... Աստւած... կը ների՛...

Քիչ յետոյ Գոհարը սգում էր հօր դիակի վրայ։

ՂԱՐԻԲ

ՎԵՐՋԻՆ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Եւրոպական Թիւրքիոյ Ս. քաղաքի պարոն X.-ին։ — Շուտով արդէն կը լրանայ երկու տարին, որ դուք իւրացուցեր էք Դաշնակցութեան պատկանած 500 ֆրանքը։ Ո՛և է առարկութիւն կամ բացատրութիւն անտեղի է այլ ևս։ Վերջին պայմանաժամ կը տրւի ձեզ մինչև առաջիկայ սեպտեմբեր $^{18}/_{30}$, այդ գումարն ամբողջովին հատուցանելու համար (չէքով, ձեզ արդէն ծանօթ հասցէին)։ Հակառակ պարագային, պայմանաժամը լրանալուն, „Դրօշակ"-ի մէջ պիտի հրապարակենք ձեր անունն ու մականունը։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕ

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ստացած է՝

Ժողովեցեալ „Ծարաւիներէն" 40 ֆրանկ, — Գերմանիայէն՝ Վրէժ եւ Հուր 3 ֆրանկ 50 սանթ. — Ց. Ց. Ե. 5 շիլին, — Ցիւրիխէն՝ Ժամը 5 ֆրանկ, — ՄԵԾ-ԿԱՑԱՐԱՆԻ Կոմիտէն՝ 303. ռուբլի 40 կոպէկ (անդամավճար եւ հանգանակութիւն), — Պետ. քաղաքէն՝ ռուս գինւորէն Բ.-ի միջոցով 100 ֆրանք, — Անյայտէն Բ.-ի միջոցով 15 ռուբլի։ Գումար 1003 ֆրանք 88 սանթիմ։

ՏԱՊԱՐ Կեդր. Կոմիտէն՝

Մարտ ամսուն մէջ. — Հրաչ 108 դահեկան, եւս (փետրուար) 50, Նարեկացի (փետր.) 50, Պերճ (յունուար — փետր.) 20։ Ապրիլ ամսուն մէջ. — Սուլիւ շրջ.-էն՝ Ս... 40, Նարեկացի 40. Հրաչ 40, Գեղջուկ 5, Պերճ (մարտ, ապրիլ) 20, Նարեկացի (ապրիլ) 40, Հրաչ (ապրիլ) 40, Թրաձուկ 216, Զարմանալի 540, Ջրվէժ շրջ. (յունուար) 27, Ա. Բ. 30, Շփոթ շրջ. (յունուար) 10, Գեղջուկ շրջ. (յունուար) 10, Գեղջուկ անհատ 5, Պերճ (մայիս-յունիս) 20, Ա. Ք. 40։ Համագումար 1361 դահեկան։

ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ Կոմիտէն՝

Դաւիթ բէկ խ. 11 ռուբլի։ ԿԱՐՄԻՐ քաղաքի Կոռնկ խ. 200 ռուբլի, նոյն տեղի կանանց „Սերոբ-Աղբիւր" խ. 36, ԿԼՈՐԻԿ-ի հանգանակութիւնից 39։ — ԴԱՇՏ-ից Վահէի խ. (յուն. փետր. մարտ) 43. 50, Գուրզէնի խ. 33, Վարդապետի խ. 54, Նուիրատուութիւններ՝ Բազէ 50, Ճամբորդներ 25. 50, Ջուր 18, Վիթխար 8. 5, Երկու ընկերներ 100, Շեփորուկ 5, Ազատասէր 2։ — ՍԵՒ ՋՈՒՐԻ Արապօ խ. 17, ԿԼՈՐԻԿԻ ամսավճարներից Հորսամեայ գումարը 46 ռուբլի, ՋՐԱՇԷՆԻ Քրիստոս Յարեաւէն 34. 45, Կոլխիտա խ. 80։

ԱՄԱՐԱՆՈՑԻ Մահ խմբի հաւաքած նուէրները — Մարտիրոս 2 ռուբլի, Սարգիս 1. 50, — Առաքել, Վանեցի, Վարպետ, Յարութիւն, Թորոս, Զաւէն, Կործուկ, Տիկին Աշխէն, Յոլակ, Օտունցի, Աշոգ, Մանաս, Վարաժնունի, Գարուն, Աբրահամ, Գոմաձոր, Եղիա, Կացին, Կվացի Ներսէս, Սեղրաք Աւետիսեան մէկ-մէկ ռուբլի, — Թաթոս, Սեղրաք, Յակոբ 50-ական կոպէկ, Մաղաք 20 կոպէկ։ — Մահ խմբի ամսավճարներից 25 ռուբլի, — պատկերների վաճառումից 2 ռուբլի։

ԳԱՂԹԱՎԱՑՐԻ կանանց Բաբկէն-Սիւնի խմբի ամսավճարներից 50 ռուբլի, Բաղիշից նուէր ստացւած 5, Արշակ 2։

ԱՊԱՍՏԱՆԻ Դարիպ խմբից մարտ եւ ապրիլ ամսավճարներ 11 ռուբլի, նուէրներ՝ 4 ռուբլի 55 կոպէկ հետեւեալներից — Ա. 3, Սեւազլուխ 50 կոպէկ, Արտ. 40, Ռուս 25, Յոյն 40։ — Հանգանակած Քար-Պօղազից՝ Ս. Զ. 12 ռուբլի, Կայծակ 5, Ց. Պ., Ա. Թ., Կ. Ա., Դ. Թ., Մղդսի 3-ական, Մ. Ա., Միստաք 2-ական, Պ. Խ., Գ. Խ., Հրատական մէկ-մէկ, Ց. Մ. 60 կոպէկ, Գ. Օ., Մ. Ա., Ս. Ա., Ստամպօլցի 50-ական կոպէկ, Հ. Պ., Գ. Թ., Ց. Գ., Պ. Օ., Պալապան 20-ական կոպէկ, Ս. Զ. Խ. Մ. 10-ական կոպէկ, պատկերներու վաճառումից 1 ռուբլի 50, — Արթիկից մայիս եւ յունիս ամսավճար 4 ռուբլի։ Համագումար 976 ռուբլի 50 կոպէկ։

ՎՐԻՊԱԿ. — „Դրօշակ"-ի 1899-ի № 1-ի ցանկին մէջ № 72-ից 10, պէտք է լինի № 73-ից 10։

ՎԻՇԱՊԻ „Մահ" Կոմիտէն՝

Ատրճանակ 20 դահեկան, Կամք 20. Քնում ի շահ 5։

ԲԱԼԿԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

ԱՄՐՈՑԷՆ 127 լեւ 25 սանթիմ. — Պարոն մը 5. — Ն. քաղաքի Խուժան խ. 9, 50, Բարեսէր Տիկին 1։

ԱՄՐՈՑԷՆ՝ Անդամավճարներ 63 լեւ, Ուրւական խ. 10, Կայծ 16. 50, Հրացան 14, ... 11. 75, Ծագում 6, Երկրագործ հայեր 6. 40, Աղբիւր 4. 40, Վարած 4, Արշաւանք 3, Գանձանակէն 6։ Գումար 287 լեւ 80 սանթիմ։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ Կեդր. Կոմիտէն՝

Մի խումբ երիտասարդներից 135 դրամ։

ԿԻՊՐՈՍ X. քղ.-ի Կոմիտէն՝

Ամար, Բազէ 2-ական շիլլին, Արծիւ, Պետ, Քէհեա, Մէկ բարեկամ, Կարմնցի մէկ-մէկ, Փնտողը կէս։ Գումար 9 ու կէս շիլլին

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝

Rédaction du Droschak, Genève (Suisse)

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՑԱՑՔՆԵՐԸ *)

Ամէն մի մարմին, ամէն մի անհատ, որ այլևայլ պատճառներով թողնում է յեղափոխական բուն գործը, բայց որ միևնոյն ժամանակ չի ուզում հաշտուել իր նոր դրութեան հետ և ձգտում է անպատճառ հաւատացնել հասարակութեան, թէ ինքը շարունակում է նոյն ասպարէզի վրայ մնալ, գատապարտուած է լինում „քննադատի“ դիւրին և աժան պաշտօնն ստանձնելու ու յաճախ իր տեսակի ընդդիմադիր դիրք բռնելու դէպի գործող մարմիններն ու անհատները։

Այդպէս էր „Արմենիան“, այդ դրութեան մէջ ընկաւ և Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան օրգանը։

Կեանքի եռուն հոսանքից կտրուած այդ քննադատները երբեք ժլատութիւն չեն ցոյց տալիս խորհուրդներ կարդալու ասպարէզում մնացողներին և հասնում են անձնուիրութեան աստիճանին, երբ որևէ պատրուակ է ներկայանում գործող մարմնի „սխալները“ հրապարակ հանելու։ Եւ որովհետև դրանով ժողովրդի անտարբեր, տգէտ կամ շահամոլ տարրի „հացին իւղ են քսում“, ուստի այդ քննադատները դիւրաւ յաջողում են յիշեալ տեսակի մարդկանց շրջաններում ձեռք բերել „լրջամիտ“, „հեռատես“, „խոհեմ“ տիտղոսները։

Ճիշդ է, որ այդ „խոհեմների“ խորհուրդները ըստ մեծի մասին անգործնական են. ճիշդ է, որ այդ քննադատներից շատերը մեծ հաճոյքով իրենց վրայ են առնում առակախօս Կրիլովի այն խոնչող հաստակաշու դերը, որ ապարանքի մասին գաղափար տալու համար յատկապէս մտնում է նրա բակը և բնակդումից մղուած՝ աղբանոցում՝ ու թափթփունքների մէջ միայն իր հետազննող դունչը տրորելով, համոզուած շեշտով հաւատացնում է դրսի հասարակութեանը, թէ սուտ են ապարանքի շքեղութեան մասին տարածուած լուրերը և թէ այնտեղ բացի ցեխից ու աղբից իսկապէս ուրիշ ոչինչ չկայ... ճիշդ է այս բոլորը, բայց և այնպէս մի որոշ սահմանում այդ „խրատները“ կարող են իրենց դրական նշանակութիւնն ունենալ։ Յաճախ է պատահում, որ կողմնակի մարդկանց աչքում կեանքի մի քանի երևոյթները աւելի պարզ են ներկայանում, քան թէ անմիջական կռուի մէջ խորասուզուածներին, և ամէն մի գործիչ պարտաւոր է ինկատ առնել հրապարակային քննադատութիւնները։ Բայց ցաւն այն է, որ ափին կանգնած այդ խոհեմ խորհրդատուները իսկապէս խորհուրդներ չեն տալիս։ Հոսանքի մէջ մարտնչողներին նրանք չեն բղաւում, թէ այս արա կամ այն, ափը հասնելու համար, այլ՝ ձեռքդ մի՛ շարժիր, գլուխդ ջրի տակ պահիր, շունչ քաշել մի՛ ուզիր, որ նոյնն է՝ թէ հրացան մի՛ կրիր, արշաւանքն աղետաբեր է, կառավարութիւնը կը գրգռի, քրդերը կը թշնամանան, եւրոպացիների հմակրութիւնը կը կորցնենք. կամ նկատելով, որ միմիայն բացասական հրահանգներով գործիչը չի կարող գոհանալ և թէ հարկաւոր է գոնէ մի դրական միջոց առաջարկել, լրջօրէն բացագանչում են՝ լուռ ու մունջ պատրաստիր և մի անգամից ափը թոփ։

*) Շարունակութիւն ապրիլ 15-ի „Յաւելած“-ի։

* * *

Դառնալով մասնաւորապէս „Մարտ“-ին, նախ և առաջ պէտք է նկատենք, որ նրա երկար խորհրդածութիւնները լիքն են երկդիմութիւններով, հակասութիւններով, խեղաթիւրումներով, „եթէ“-ներով համեմած, որոնք յաճախ ամէն բան ասում են և ոչինչ չեն ասում։

„Հայ ժողովրդին վիճակը բարեփոխելու համար եթէ մեր յոյսը պէտք էր հանգչեցնել Եւրոպայի բարեսիրական ու քրիստոնէական զգացումներուն վրայ ինչպէս կը սիրէին յուսալ եւ կը յուսան մինչեւ հիմա հայ եկեղեցականները, հայ քաղաքագէտները, հարկ է նաեւ ընդունիլ թէ արիւնաթաթաւ խաչը արիւնազանգ ռումբէ մը աւելի կրնայ ազդել քրիստոնէական սրտերու վրայ“... („Մարտ“, թիւ 5, Ռմբաձգութիւն)։

Ի՞նչ հասկացաւ այս տողերից ընթերցողը։

Եթէ նա համարձակւի գալ այն եզրակացութեան, թէ ռումբ չպէտք է գործածել, այլ արիւնաթաթաւ խաչը ձեռքին բռնած ապաւինել քրիստոնեայ աշխարհի գթութեան. եթէ նա համարձակւի այս քարոզի պատճառով „Մարտ“-ը հակայեղափոխական անուանել, „Մարտ“-ի խմբագրութիւնը, իհարկէ, ցոյց կը տայ վերևի „եթէ“-ն և այդ միտքը կը փաթաթի հայ կղերականների, հայ քաղաքագէտների շլինքին։

Բայց „արիւնաթաթաւ խաչի“ և „արիւնազանգ ռումբի“ նշանակութիւնը աւելի է պարզւում նոյն յօդուածի այլ կտորներից։ Բանից դուրս է գալիս, որ „հայ ազգին վիճակը բարւոքելու“ միջոցներից մէկը եղել է... համաձայնութիւն թիւրք կառավարութեան հետ։ Խրիմեանի պատրիարքութեան օրով „բարեկարգութիւններու շատ չափաւոր և համեստ ծրագիր“ է եղել ներկայացուած ուղղակի թիւրք կառավարութեան, բայց „իսլամական աշխարհին մէջ Հայոց համար պատմական ճշմարտութիւններու կարգը դասուած „հաւատարիմ ժողովուրդ“-ի աւանդութեան ջնջումի յայտարար առաջին նշանը“ տալիս է ներսէս պատրիարքը, դիմելով Կ. Պոլիս գումարուած դեսպանախորհրդին։

„Ա՛լ իբր կատարուած, անդարձ իրողութիւն հռչակուեցաւ այդ ջնջումը այն օրը երբոր միեւնոյն պատրիարքը... մէկէն ի մէկ կը վազէր Սան-Յթէֆանօ ու Կ՚ինկար յաղթականին գիրկը, աղերսելով փրկել տարաբաղդ քրիստոնեայ ժողովուրդ մը „բարբարոս վայրագ կառավարութեան մը ճիրաններէն“։

„Հակահաւատարմական քաղաքականութիւնը շարունակուեցաւ Պերլին, ուր սակայն սուլթան Համիտի դիւանագիտութիւնը՝ աջակցութեամբ հայ էֆէնտիներէ ոմանց պարզամտութեանը եւ շատերուն դաւաճանութեանը, ջնջեց հայ ազգին փրկութեանը համար հինգ դարէ ի վեր առաջին եւ միակ անգամը ներկայացած անսպասելի եւ անյուսալի պատեհութիւնը։ Հայկական հինգ նահանգները հինգ տարուան պայմանաժամով հայ կուսակալի մը վարչութեան ներքեւ կառավարելու ծրագիրը, զոր Հայ մը, „ճշմարտապէս պետական անձնաւորութիւն“ — ըստ Լորտ Պիքոնսֆիլտի, — թելադրած էր Պերլինի վեհաժողովին, արդէն Գերմանիոյ, Փրանսայի եւ Անգլիոյ ներկայացուցիչներուն հաւանութեանը արժանացած, պիտի ներմուծուէր միջազգային դաշնագրին մէջ, երբ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը իր բուռն բողոքներով քանդեց այդ խորհուրդը եւ մահամերձ վիրաւորեց հայ ազգին ազատութեանը դատը“։

Մենք ոչինչ չենք ասում՝ այն մասին, թէ որքան ճիշդ է արձանագրուած իրողութիւնը. չենք ուզում իմանալ նոյնպէս, թէ ինչ զգացումներ են դրդել, որ „Մարտ“-ը „ճշմարտապէս պետական անձնաւորութեան (համարձակւում՝ ենք կարծել, թէ Նուբար փաշայի մասին է խօսքը) ծրագիրը համարէ „հայ ազգին փրկութեանը համար հինգ դարէ ի վեր առաջին և միակ ան-

գամը ներկայացած անսպասելի և անյոյսալի պատեհութիւնը“. չգիտենք վերջապէս, թէ ինչու այդ ծրագիրը չպիտի խախտէր „հաւատարիմ ժողովուրդի աւանդութիւնը“: Մեզ համար ուշադրութեան արժանին այն է, որ մի շարք վիճելի եզրակացութիւնների մէջ երեք կէտ անվիճելի են մնում. 1) յեղափոխական կուսակցութեան օրգանի կարծիքով թիւրք կառավարութեան հետ համաձայնութիւնը կարող էր հայ ազգի վիճակը բարւոքել. 2) Ներսէսը խանգարեց ընդմիշտ այդ համաձայնութիւնը և 3) պատրիարքարանը հակառակ լինելով Նուբարի ծրագրին ու յաջողեցնելով 61-րդ յօդուածը՝ „մահացու վիրաւորեց հայ ազգին ազատութեան դատը“:

Այս բոլորից յետոյ դժուար է հաւատալ, թէ նոյն այդ Վերակազմեալ Վարչութիւնն էր, որ նոյն տաճիկ կառավարութեան վրայ հետևեալն էր գրում.

„Տաճիկ վարչութեամբ բարեկարգութիւն չի կրնար ըլլալ“: (Վերակազմեալ Վարչութեան Անանուն օրգան, 10 դեկտեմբեր 1896):

Նոյն այդ յօդուածում գտնում ենք և հետևեալ կտորը.

„Տաճկական վարչութիւնը ապստամբ է բարեկարգութեան ու եւ է զաղափարի դէմ: Ինչ որ „թրքական կառավարութիւն“ կը կոչուի աւազակներու ընկերակցութիւն մը եղած է միշտ: „C'est une association de brigands“, կը յայտարարէր Ներսէս պատրիարք „Թայմզ“-ի թղթակից Մաքէնզի Վալլասին, թիւրք կառավարութեան համար“:

Համաձայնութիւն աւազակների ընկերակցութեան հե՞տ... „Ազգային պաշտպանութեան կեդրօնը“, զանազան ժամանակներ, որքա՜ն տարբեր կերպով է ըմբռնում „ազգային գերագոյն“ շահերը... Մի քանի ամիս առաջ Վերակազմեալ Վարչութիւնը ինքը Ներսէսի հեղինակութեանն էր դիմում թիւրք կառավարութեան անբարեկարգելի լինելը ապացուցանելու, իսկ քիչ յետոյ դատափետում է Ներսէսին „հաւատարիմ ժողովուրդի“ աւանդութեան ջնջումի համար, այսինքն ճիշդ այն բանի համար, որ անխուսափելի հետևանքն էր Ներսէսի միշտ՝ իսկ Վերակազմեալի մի քանի ամիսներ առաջ դաւանած հիմնական համոզմունքին...

Աւելորդ է ասել, թէ Ներսէսի գործունէութիւնը սխալ, վնասակար համարողները Դաշնակցութեան ռմբաձգութեան համամիտ չէին կարող լինել: Օգոստոս 14-ը և նոյնանման փորձերը, „Մարտ“-ի կարծիքով, չեն կարող նպաստաւոր լինել հայկական դատին, չեն կարող եւրոպացիների շահերը վտանգել:

Հարկ չենք տեսնում առաջ բերել այստեղ մեր տեսութիւնները այս հարցի մասին: Իսկ երբ „Մարտ“-ը հարցնում է. „Ուրեմն ժընէվցիները (այսինքն դաշնակցականները) ե՞րբ, ո՞ւր, ի՞նչպէս վտանգեցին եւրոպական շահերը“, մենք միայն կը յիշեցնենք մի քաղուածք, որի հեղինակութեան առաջ, կարծում ենք, „Մարտ“-ի խմբագրութիւնը չի կարող չխոնարհուել.

„Ու շահադէտները նորէն ուզեցին խաբել Եւրոպան. համիտին աշակիցներն էին եւ գրեթէ պիտի յաջողէին երբ օգոստոս 14|26-ը պայթեցաւ. տաճիկ թուղթերը նորէն զահավիժեցան իրենց հետ քաշելով Պանք Օթոմանը եւ հանրային Պարտքը“: (Վերակազմեալ Վարչութեան Անանուն պաշտօնաթերթ, 10 դեկտ. 1896):

Օգոստոս 14-ի նման դէպքերից կարելի՞ է դրական հետևանքներ սպասել: Ո՛չ, պատասխանում է „Մարտ“-ը: Բայց ահա թէ ի՞նչ էր ասում նոյն Անանուն օրգանը 1896 սեպտեմբեր 24-ին.

„Օգոստոս 14/26-էն ի վեր հայկական հարցը ուժգնապէս կը յուզուի Եւրոպայի ամէն կողմը եւ մանաւորապէս Անգլիոյ մէջ: Ամէն ատենէ աւելի հիմա է որ մեր դատին նպաստաւոր կարգադրութեան մը համար հայ ազգը եւրոպական միջամտութեան վրայ յոյսը կը դնէ“:

Եւ մի ուրիշ տեղ՝

„Օգոստոս 14/26-ի կոտորածներուն վրայ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ ահագին շարժում մը սկսաւ սուլթանին եւ իր կառավարութեան դէմ: Պուլկարական կոտորածներէն ի վեր, որ 1876-ին տեղի ունեցան, Անգլիոյ մէջ երբեք այս աստիճան հակա-թրքական յուզում առաջ չէր եկած“ („Հայկական դատը Եւրոպայի մէջ“):

Դարձեալ՝

„Ինչ օրեր էին անոնք, Վանի ջարդը, Կ. Պոլսոյ կոտորածը, ու ամբողջ եւրոպական իրարանցումը, որ պահ մը միջազգային քաղաքականութեան մէջ օրեան հարցը ըլաւ հայկական հարցը: Օրէօր սրատտրոփ կըսպասէինք մխիթարական լուրի մը, հորիզոնին վրայ աւետաւոր լոյսի մը: Ու ամէնէն աւելի հաւատքով ըսպասողներուն մէջն էր Նուպար փաշան...

— Ողէկ լուրեր ստացայ այսօր, կ'ըսէր ու իր դէմքը կը ճառագայթէր“...

(Լ. Զարթումեան, Նոր Կեանք, թիւ 3, փետրուար 1899):

Եւ այդպէս միշտ. Վերակազմեալ խումբը եթէ մի կողմից ձգտում է Դաշնակցութեան վարկը ձգել, միւս կողմից կեանքի որոշ կարգի երեւոյթներ, իր հաշուին եկած տեղը, վարդագոյն ներկայացնելու համար ջանքեր չի խնայում: Բարեբախտաբար սրան ենք պարտական, որ Վերակազմեալ Վարչութիւնը մէկմէկ ստիպած է լինում մի քանի ճշմարտութիւններ երեւան հանել: Բանից դուրս է գալիս, որ օգոստոս 14-ից բարելաւութիւններ էինք սպասում ոչ միայն մենք, ոչ միայն Անանուն Հնչակի խմբագրութիւնը, այլ և, „ըստ Լորտ Պիքոնսֆիլտի, ճշմարտապէս պետական անձնաւորութիւնը“:

„Ռմբաձգութիւն“ յօդուածի մէջ գտնում ենք նաև հետևեալ բնորոշ տողերը.

„Ամէն քաղաքականութիւն իր արդիւնքէն կը դատուի. այս սկզբունքին համեմատ քննելով ժընէվցիներու (խօսքը դարձեալ Դաշնակցութեան է վերաբերում) քաղաքականութիւնն ալ կը տեսնենք թէ իրենց գործերը այո՛ վտանգաւոր եղան, բայց հայերո՛ւն, ո՛չ թէ եւրոպացիներուն, ինչ որ խելքի ապացոյց մը չէ“:

Եթէ Դաշնակցութեան Կ. Պոլսի Կոմիտէն խելքի ապացոյց չի տուել օգոստոս 14-ը կազմակերպելով, Հնչակեան Վերակազմեալ Կուսակցութիւնը իր գոյութեան առաջին օրերում՝ և „ըստ Լորտ Պիքոնսֆիլտի՝ ճշմարտապէս քաղաքական անձնաւորութիւնը“ իր կեանքի վերջին օրերում՝ նոյնպէս խելքի աւելի մեծ ապացոյցներ չեն տուել, օգոստոս 14-ից դրական օգուտներ սպասելով: Թողնենք այդ: „Ամէն քաղաքականութիւն իր արդիւնքէն կը դատուի“. բայց որովհետև Վերակազմեալ Վարչութիւնը „տաղանդի դասակարգը“ իր մէջ առնելով ձգտում է անպատճառ խելքի ապացոյցներ տալ, իսկ որովհետև միւս կողմից այս կամ այն ձեռնարկի ամբողջական արդիւնքը շատ դժուար է ճշգիւ նախագուշակել, մենք իրաւունք ունենք ենթադրելու, որ Վերակազմեալ Վարչութիւնը իր խելացիութիւնը անխախտ պահելու համար ո՛չ մի ձեռնարկի չի դիմիլ, ո՛չ մի գործնական միջոց չի առաջարկիլ և անսխալականութեան դափնին գուցէ միայն մեռելներին համաձայնի զիջանել...

Մենք, իհարկէ, միջոց չենք համարում հետևեալ առաջարկութիւնը, որ լրջօրէն յանձնարարում են „Մարտ“-ի տաղանդաւոր քաղաքագէտները.

„Պոլսոյ մէջ եւրոպական շահերը վտանգելու միջոցը յստակօրէն (՞) կը պատկերանայ ամէնուս աչքին առջեւ: Պոլսոյ տէրը ըլլանք եւ զայն Ռուսիոյ, կամ Անգլիոյ, կամ

Աստրիոյ շնորհելու իշխանութիւնը վայելենք (՞). այն ատեն ապահով կլինանք ըլլալ թէ եւրոպական միջամտութիւն մը անխուսափելի կ՚ըլլայ: Եւ կամ հաւանական է որ մէջերնին համածայնին Վոսփորը մեզի ձգելու, ինչպէս ձգած են Թիւրքին“ (Ռմբաձգութիւն):

Որքան էլ գրաւիչ լինի տեսնել Վերակազմեալ Վարչութիւնը Պարիսի դերում, գժտութեան խնձոր — Պոլիսը ձեռքում բռնած և մեծ պետութիւնների ամբարտաւան ներկայացուցիչներին Աթէնաս-Պալլասի, Ափրոդիտէի հմայքներով Վերակազմեալ Վարչութեան շուրջը գուրգուրալիս, դա չի խանգարիլ հետևողական մարտականին հայհոյել „Մարտ“-ի անհետևողական քաղաքագէտներին, որ առանց արդիւնքը տեսնելու այդպիսի յանդուգն միջոց են առաջարկում, որ նրանք աչքի առաջ չեն առնում, թէ այս կամ այն պետութեան արած շնորհը կարող է նախանձ առաջ բերել միւսների մէջ, որից կը ծագի պատերազմ, աւելի յարատև և սոսկալի, քան Տրոյականը... Դա չի խանգարիլ մեզ ևս դնել Վերակազմեալներին մի փոքրիկ հարց. — „Բայց, ախր, ի՞նչ միջոցներով կարելի է Պոլսի տէրը դառնալ“... Մենք արդէն տեսանք, որ Վերակազմեալ Վարչութիւնը ինչ ինչ պատճառներով չի ուզում օգտուել իր գերբնական ուժից, չի ուզում ուժանակ, ռումբ փոխադրել, մարդիկ ճանճի պէս սատկեցնել, պաշտօնատներ կոխել, փաշաներ մէջտեղից վերցնել... և այդ ճանապարհով Պոլսի տէրը դառնալ: Ինչքան և ցաւալի, ինչքան և վրդովիչ լինէր մեզ համար „Ազգային պաշտպանութեան Կեդրոնի“ այդ ընթացքը, որ սպառնում է պատճառ դառնալ „Վոսփորը մեզի չձգելուն“, բայց և այնպէս փաստը սա է, որ նա արժանի չի համարում յիշեալ միջոցներին դիմել:

Ուրիշ ի՞նչ միջոց կայ: 1895 թուականի Հնչակեան ցոյցի նման ձեռնարկը, երբ իսկապէս ոչ պաշտօնատներ կոխեցին և ոչ մարդիկ սատկեցրին... Սակայն զգում ենք, որ մեր հետաքրքրութիւնը սկսում է գաղտնապահութեան սահմանից անցնել և Վերակազմեալ քաղաքագէտների այդ հանճարեղ ծրագիրը հասկանալու համար մեզ մնում է միայն սպասել այն օրին, երբ Վերակազմեալները արդէն Պոլսին տիրացած ու մեծ պետութիւններից ՄԷԿԻՆ „զայն շնորհելու իշխանութիւնը վայելում“ կը լինի:

Միայն Պոլսին տէր լինելու ճանապարհով չէ, որ „Մարտը“ հնարաւոր է համարում հայկական հարցը լուծել: Կայ մի այլ, աւելի ընդհանուր միջոց:

„Այո՛, այդ ժողովուրդը իր դատը պիտի շահի, իր իրաւունքը ազգային ուժով բիրտ ուժին դէմ պաշտպանելով և ոչ գիշերագնաց աւազակներու նման գաղտագողի դաւադրութիւնների միջոցաւ“, ասպետաբար զայրանում է „Մարտը“ և իբր օրինակ այդ տեսակ պաշտպանութեան՝ առաջ է բերում... նախ և առաջ Պոլսի 1895-ի Հնչակեան ցոյցը և ապա Զէյթունի կռիւը: 1895-ի ցոյցի մասին չարժէ խօսել: Ընթերցողը կը համաձայնի, որ մի ուրիշի բերանում այդ օրինակը կարելի էր շատ յաջող ծաղր համարել. չարժէ, մանաւանդ որ „Մարտ“-ի էջերում այդ ցոյցին յատկացրած նշանաւոր դերը — ինչպէս կը տեսնենք մենք շուտով — կեղծ է:

Զէյթունի կռիւ դէմ, իբրև բուն ժողովրդական շարժման, մենք ասելիք չունենք. բայց նախ, ինչպէս „Պոլսոյ տէրն ըլլալու“ առթիւ, այստեղ ևս ստիպուած ենք կրկնել, որ հարցը հէնց նրանումն է, թէ ի՞նչ ճանապարհով, ի՞նչ միջոցներով ամբողջ հայ ժողովուրդը կարող է զէյթունցոց դրութեան հասնել. երկրորդ՝ զարմանալի է, որ „ամէն քաղաքականութիւն իր արդիւնքէն“ դատող Վերակազմեալ քաղաքագէտներն են Զէյթունի ապստամբութեան օրինակը յանձնարարում — ապստամբութիւն, որի արդիւնքն եղաւ՝ (իրենց իմաստով, ի՛հարկէ) սով, բազմաթիւ զոհեր, մահմէդականների գրգռում, կառավարութեան հետագայ աչալրջութիւն...

Քիչ յետոյ „Մարտը“ դիմում է Խանասորի արշաւանքին և համաձայնելով եւրոպական մամուլի արտայայտած կարծիքին, ինքը ևս արդարացնում է արշաւանքը վերոյիշեալ տեսակէտից. „Բաց դաշտին մէջ զէնքով թշնամին դէմ յարձակումը ազատութեան ետևէն վազող ժողովուրդի մը արդար իրաւունքն է“ ասում է „Մարտը“, և չնայած դրան, նա դարձեալ դատապարտում է յեղափոխական այս փայլուն ձեռնարկը. և ի՞նչ հիման վրայ.

„Այդ արշաւանքը դատապարտուած էր աղետաբեր ըլլալ եթէ ոչ ամբողջ ազգին, զոնէ Վասպուրականին ապահովապէս (՞) ... Յստակութիւնը բոլորովին չմթագնած մտքի մը առջև պիտի պարզուէր արիւնաթոյր տեսարանը հարիւրաւոր, զուցէ հազարաւոր հայերու սրախողող կոտորածին, ու ծուխն ու բոցը հայ գիւղերու, գիւղաքաղաքներու, անխուսափելի հետեւանք այդ օրինակ շարժումի մը: Եւ այդ ամէն աղէտները ազգային ընդհանուր դատին ոչ թէ միայն անօգուտ, այլ եւ վնասակար“:

„Մտքի յստակութիւնը բոլորովին չմթագնած“ ընթերցողը, ի՛հարկէ, իրեն չի կորցնում այս „ամէն աղէտների“ նկարագրութիւնից: Նա չի մոռանում, որ թէև „Մարտը“ դատապարտել էր Խանասորի արշաւանքը „աղետաբեր ըլլալ“, բայց, ինչպէս յայտնի է, նա ամենևին աղետաբեր չեղաւ. չի մոռանում, որ „ծուխն ու բոցը“, „սրախողող կոտորածը“, „արիւնաթոյր տեսարանը“ տեղի չեն ունեցել, որ այս բոլորը գուշակութիւններ են միայն, աւելի ճիշդն ասած, չարագուշակութիւններ, որոնք բարեբախտաբար չեն իրականացել — գուցէ, իցաւ սրտի հայկական աւերակների վրայ գուժող բուերի... Մի բան միայն ակներև է մեզ համար, որ „Մարտը“ չափազանց շատ է վստահ իր ընթերցող համախոհների պարզամտութեանը վրայ:

Ամփոփենք „Մարտ“-ի հայեացքները:

Ներսէսի քաղաքականութիւնը սխալ էր: Նա քանդեց „իսլամական աշխարհին մէջ հայոց համար պատմական ճշմարտութիւններու կարգը դասուած „հաւատարիմ ժողովուրդի“ աւանդութիւնը“: Այնուհետև իբր „հայ ազգին փրկութեանը համար հինգ դարէ ի վեր առաջին և միակ անգամը ներկայացած անսպասելի և անյուսալի պատեհութիւնը“ ներկայացաւ... Նուրբար փաշայի ծրագիրը: Բայց պատրիարքարանը հայ ազգի փրկութեան համար առաջին ու միակ անգամ իջած այդ Մեսիայի ձայնն էլ խեղդեց և „մահամերձ վիրաւորեց հայ ազգին ազատութեան գործը“:

Իսկ այժմ, որովհետև Մեսիան միակ անգամն էր եկաւ ու գնաց, պէտք է նոր միջոցներ փնտռել „մահամերձ վիրաւորած ազատութեան գործը“ վերակենդանացնելու համար:

Որո՞նք են այդ միջոցները:

Ռմբաձգութիւնը մեր դատին օգտաւէտ չէ. թէև մի ժամանակ ինքը՝ Վերակազմեալ Վարչութիւնը և նոյն իսկ „ճշմարտապէս պետական անձնաւորութիւնը“ մա-

մտութիւն ունէին օգոստոս 14-ի չարիքներից բարիք-ներ սպասելու, բայց... մի խօսքով օգտաւէտ չէ։

Խանասորի արշաւանքը նոյնպէս վնասակար է. թէև դրա պատճառով „եթէ ոչ ամբողջ Հայ ազգը, գոնէ Վասպուրականը ապահովապէս“ աղէտների չենթարկուեց, բայց, իհարկէ, „ապահովապէս“ ենթարկուած պիտի համարել, որովհետև այդպէս է գուշակել „Մարտը“։

Պոլսի տիրանալը թէև մեզ անպայման խոստանում է „եւրոպական միջամտութիւն“, „Վոսփոր“ և այլն, բայց արի տես որ „Ազգային պաշտպանութեան կեդրոնը“ չի բարեհաճում այդ նպատակի համար „Վոսփորի վրայ հաճոյալիր ուղևորութենէ մը աւելի դիւրին“ գործերով զբաղել։

„Ազգային ուժով բիրտ ուժին դէմ կռուելու“ սկզբունքը իսկապէս գործի, կռուի չպիտի վերածուի երբեք, որովհետև բոլոր այն գործնական միջոցները, որոնք միայն կարող են „բիրտ ուժին դէմ կռուելու“ համար „ազգային ուժ“ նախապատրաստել — բոլոր այդ միջոցները սիստէմաբար մերժւում են Վերակազմեալի կողմից։

Բայց պէտք չէ վշտանալ. Վերակազմեալը „ազգային գերագոյն շահերը պաշտպանելու“ համար „գերագոյն“ մի միջոց էլ ունի. լսեցէք... Դա համբերութիւնն է։

„Համբերութիւնը ոչ միայն կրօնական առաքինութիւն է, այլեւ քաղաքական իմաստութիւն“։
(„Մարտ“ թիւ 4, Մեր կացութիւնը)։

„Անձնուիրութիւնը միայն վտանգի ենթարկելու, մահուան դիմելու յօժարակամութեան ու փութաջանութեան մէջ չկայանար... Կայ ուրիշ անձնուիրութիւն մը, մահէն աւելի ծանր, որուն շատ քիչերը կրնան ընդունակ ըլլալ։ Հանրային գործին համար համբերատար ոգւով երկարատեւ, անպայման ժամանակով լռիկ աշխատութեան անձնուիրութիւնը... Ըսուած է թէ „հանճարը համբերութիւն է“ պիտի ըսել թէ յեղափոխութեան մէջ ալ խելքը համբերութիւնն է“... („Մարտ“, թիւ 5)։

Ներսէսի քաղաքականութեան դատապարտութիւն, թիւրք կառավարութեան հետ համաձայնութիւն, հաւատարիմ ժողովուրդի աւանդութեան պահպանում, վերջապէս համբերութեան՝ „անպայման ժամանակով“ համբերութեան ջատագովութիւն... Բայց չէ՞ որ այս բոլորը մեզ ծանօթ երգի եղանակներ են. չէ՞ որ սա մեր պապերի, հայ էֆէնդիների, Բարթուղիմէոսների, Աշըգեանների հինաւուրց օրօրներն են, որոնք յարութիւն են առել Վերակազմեալների բերանում...

Տարբերութիւն կայ սակայն։

Աշըգեանները, էֆէնդիները այն աստիճան անփորձ են եղել, որ չեն մտածել հէնց սկզբից իրենց համար „յարմար դիրք քռնել“։ Երբ նրանց հայհոյել են կամ անարգել, ատրճանակի փողը ցոյց տուել՝ նրանք լուռ են մնացել, մի քանիսը գուցէ մինչև իսկ խղճի խայթ են զգացել։ Բայց դրանցից ոչ մէկի խելքը չի կտրել վերը բերած հանճարեղ պարզաբանութիւնը տալով իրեն անարգողներին իր „հնազանդութիւնը“ „յեղափոխութիւն“, իսկ „համբերութիւնը“ „անձնուիրութիւն“ յայտարարել։

Մեր պապերին մենք ստրուկներ էինք անւանում, էֆէնդիներին՝ ժողովրդի թշնամիներ, Աշըգեաններին՝ ազգային դատի դաւաճաններ, Վերակազմեալ Կեդրոնական Վարչութեան դիրքը բնորոշելու համար մենք մի խօսք ենք միայն գտնում՝ շառլատանութիւն։

* * *

Զափազանց յամառ ընթերցողին ևս համոզելու համար, որ Վերակազմեալ Վարչութիւնը իսկապէս ձեռք է քաշել յեղափոխութիւնից և որոշել է փայլել „երկարատև, անպայմանժամանակով համբերութեան“ առաքինութեամբ, մնացել է միայն մի միջոց՝ այն է՝ Վարչութեան սեփական խոստովանութիւնը։ Այդ էլ առաջ բերենք։

„Եւրոպայի հանրային կարծիքին վրայ լաւ ազդեցութիւն ունեցան այն քողոքագրերը որոնք Մէրսինի եւ Զէյթունի դէպքերուն առթիւ հնչակեան Կուսակցութեան կողմէն Կ. Պոլսոյ վեց դեսպանատները ղրկուեցան։ Նմանապէս գոհունակութեան տեղի տուաւ այն հերքմնագիրը որ Բարիզի „Թան“ օրագրին մէջ երեւցաւ Օրմանեան պատրիարքին դէմ եղած սպառնալիքի մը համար։ Շատոնց էր որ Անգլիոյ եւ Ֆրանսայի լրջախոհ մամուլը առիթ չէր ունեցած նպաստաւոր լեզուով խօսիլ ազգային դատին համար աշխատող մարմիններուն վրայ։ „Թան“-ի կամ „Թայմզ“-ի նման թերթերէ հնչակեան Կուսակցութեան ուղղութեանը մասին նպաստաւոր կարծիքներու արտայայտութիւնը անտարակուսելի նշան մըն է (անտարակուսելի նշան ՞?.) թէ մեր ընթացքը հայ ազգին օգտակարապէս կը ծառայէ“։ („Մարտ“, թիւ 9, „Շշմարիտ սպառնալիք“)։

Այստեղ մենք չենք ուզում խօսել „լրջախոհ“ մամուլի իսկական դերի ու մանաւանդ պարբերաբար Եըլտըզին ծախուող „Թան“-ի բռնած դիրքի մասին մեր հարցի վերաբերմամբ։ Եւ երբ Վերակազմեալ Վարչութիւնը „լրջախոհ“ մամուլի գովեստը իր նոր ընթացքի օգտակարութեան „անտարակուսելի նշան“ է համարում, գիտենք, որ դժուար է որոշել, թէ ինչի՞ արդիւնք է դա, խորին տգիտութեան, թէ դարձեալ կեղծիքի։ Դա չէ կարևորը։ Զափազանց յամառ ընթերցողի ուշադրութիւնը դարձնում ենք այն հանգամանքի վրայ, որ այսպէս կամ այնպէս յայտնուել է մի կարծիք, որով Վերակազմեալ Վարչութիւնը պարծենում է։

Առաջ բերենք այդ կարծիքը։

« *Voilà donc une des grandes organisations arméniennes qui aurait renoncé — si nous entendons bien sa déclaration — à recourir aux* procédés révolutionnaires *et à pratiquer la* propagande par le fait. *On ne peut que l'en féliciter.* »

(Temps, 5 janvier 1898.)

„Ահա, ուրեմն, հայ մեծ կազմակերպութիւններից մէկը, որ հրաժարուած է եղել, — եթէ միայն ճիշդ ենք ըմբռնում նրա յայտարարութիւնը, — յեղափոխական միջոցներին դիմելուց եւ գործով պրոպագանդա անելուց։ Այդ բանի համար նրան չնորհաւորել միայն կարելի է“։

Թէ „Թան“-ը ճիշդ է հասկացել Վերակազմեալ Վարչութեան յայտարարութիւնը, այդ պարզ է նրանից, որ „Մարտ“-ը ոչ միայն չի բողոքում, չի սրբագրում, այլ և պարծենում է այդ առթիւ արած շնորհաւորութեան համար. թող պարծենայ... Մեր կողմից նախանձելու տեղիք չենք տեսնում։ Զենք էլ տարակուսում, որ „անառակ որդու“ դարձը ուրիշների կողմից աւելի ջերմ ընդունելութիւնների կ'արժանանայ...

Միայն անընդհատ „Միութիւն, միութիւն“... պոռացող ու Դաշնակցութիւնը անւանարկող միամիտներին թողնում ենք այժմ իրենց միամտութեան չափը որոշել։

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ ԴԷՊԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Տեսնենք հիմա, թէ ինչպէս վերաբերուեց Վերակազմեալ Վարչութիւնը դէպի Դաշնակցութիւնը, որի հետ յանձնարարուած էր Վերակազմեալ Հնչակեան Ընդհանուր Ժողովի կողմից միութիւն առաջ բերել։

Մի կողմ թողնելով այն սուտ արշաւանքը, որ կատարուում էր մասնաւոր կերպով այս անգամ ևս մենք կանգ կ'առնենք միայն այն անհերքելի փաստերի վրայ, որ ուրանալ չի կարելի, և կը վերցնենք „Մարտը“, որը սկզբում կեղտեր էր շպրտում Ծուռ ու մուռ ճանապարհով, իսկ յետոյ արդէն լրբութեան աստիճանի հասած համարձակութեամբ։ Եւ որպէսզի ընթերցողի հետ միասին ըստ կարելւոյն քիչ մնանք այդ ճահճի մէջ, մենք կը վերցնենք միայն մի համար, նոյն չարաբաստիկ 5-րդ համարը, որ մեզ ծառայեց „Մարտ“-ի տեսական հայեացքները պարզելու։ Այնտեղ մենք արդէն տեսանք, թէ ի՞նչ հոգատարութեամբ Վերակազմեալ Վարչութիւնը աղաւաղում էր դաշնակցական ձեռնարկների նշանակութիւնը։ Բերենք նրանից մի քանի այլ նմուշներ։

1.—Ռմբաձգութիւն յօդուածի մէջ կարդում ենք հետևեալը.

„Քանի մը տարի յետոյ Կովկասցի ուսանողները հետզհետէ Ժընէվ հիմնեցին թերթեր“։

„Մարտը“ իրեն յատուկ պարզութեամբ հասկացնում է ընթերցողին, թէ „Դրօշակը“ այդ թերթերից մէկն է։ Հարկ ենք համարում յայտնել, որ „Դրօշակը“ հիմնուել է ոչ Ժընէվում և ոչ էլ ուսանողների ձեռքով։ Այս ըստ երևոյթին անմեղ սուտը կարևոր է, որովհետև դրա հետ կապուած է մի այլ պարագայ։ „Մարտը“ իր ընթերցողների աչքում Դաշնակցութեան վարկը ձգելու համար գտել է մի միջոց. „Ժընէվցիներ“ անունը տալով Հնչակեան հին Կեդրօնին, նա նոյն անունն էլ մեզ է յատկացնում, այնպէս, իբր այդ երկուսը միևնոյն մարմինը լինեն։ Այս միջոցը, եթէ այս անգամ ևս սրամիտ չէ, բայց, ինչպէս և միշտ, կեղտոտ է։ „Մարտը“ սրանով պարզապէս շահագործում է իր ընթերցողների միամտութիւնը, տեղիք տալով նրանց Հնչակեան Կեդրօնի պակասութիւնները մեր վզին փաթաթելու։ Բացի այդ, „Ժընէվցիներ, Ժընէվցիներ“ ասելով՝ նա ճիշդ այնպէս է աշխատում վախեցնել իր ընթերցողներին, ինչպէս պառաւ տատերը վախեցնում են իրենց թոռնիկներին, սրանց ականջում փսփսալով, ինքնին անմեղ խօսքեր, բայց երկիւղ ներշնչող շեշտով։

2.—Ահա օգոստոս 14-ի պատմութիւնը „Մարտ“-ի էջերում։

„1896 օգոստոս 14 | 26-ին Պանք Օթոմանի մէջ ռմբաձգութեան դիտաւորութիւն մը (տեղի ունեցաւ), եւ այս օգոստոս 20-ին նմանօրինակ պատիկ փորձ մը։ Անցած տարի ռմբաձիգներէն մէկը դիպուածով մեռաւ. միւսները կատարեալ ապահովութեամբ փոխադրուեցան Եւրոպա, ուր Կ'ապրին հանգիստ“։

Այս փոքրիկ կտորի մէջ ստերի թիւը մի քիչ աւելի է պակաս, քան խօսքերինը։ Նախ սուտ է, իբր թէ բանկի մէջ միայն ռմբաձգութեան „դիտաւորութիւն“ է եղել. լոկ դիտաւորութեամբ զինուորներ, պահապաններ չէր կարելի կոտորել։ Սուտ է, իբր ռմբաձիգներից միայն մէկն է մեռել, այն էլ դիպուածով։ Սուտ է, որ միւսները „կատարեալ ապահովութեամբ“ փոխադրուել են։ Սուտ է, որ բոլորը Եւրոպա են փոխադրուել. իսկ պարզապէս լրբութիւն է պնդել, թէ նրանք „Եւրոպա հանգիստ կ'ապրին“։

3.—Սուտ է, իբր թէ այդ դէպքերը „մեզի Եւրոպայի աչքին հակակրելի ու արհամարհելի կ'ընեն“։ Իբր ապացոյց, եւրոպական լրագրերից մենք կարող էինք առաջ բերել օգոստոս 14-ի առթիւ հիացում արտայայտող ահագին թւով քաղուածքներ։

Բայց առհասարակ օգոստոս 14-ի դէպքի մասին քիչ գաղափար կազմելու համար մենք խորհուրդ կը տայինք Վերակազմեալ Վարչութեան մի անգամ էլ կարդալ հէնց իր խմբագրած „Հնչակ“-ի 1896 սեպտեմբեր 24-ի համարը։

4.—Ահա և Խանասորի արշաւանքի նկարագրութիւնը։

„Այս եղերերգական յարձակումներու վրայ որոշ գաղափար մը կազմելու համար հաւանօրէն պիտի պարտաւորուինք սպասել անգլիական „Կապոյտ գրքի“ մը հրատարակութեանը։

„Առայժմ մօտաւորապէս գիտցածնիս սա է թէ պարսկական սահմանագլխէն քանի մը հարիւր հայ մտած են Թրքական սահմանագլուխը եւ սպանութիւններ գործեր են. հալածուելով քիւրտերէն հայերը քաշուեր են տեղերնին։ Վրէժխնդիր քիւրտերը անկէ ետքը խուժած են Սալմաստի հարուստ հայ գիւղերը եւ ջարդուփշուր ըրած են քանի մը հարիւր դժբաղդ հայ“։

Թողնենք այն հարցը, թէ „Կապոյտ գրքի“ տեղեկութիւններից որ տեսակինը կարելի է արժանահաւատ համարել. բայց միթէ՞ նոյնիսկ մինչև դրա հրատարակութիւնը չէ՞ր կարելի աւելի բարեխիղճ գտնուել և Սալմաստի հարուստ հայ գիւղերի „քանի մը հարիւր դժբաղդ հայ“ իզուր տեղը ջարդուփշուր չանել...

5.—Խօսելով յեղափոխական գործունէութեան մասին, „Մարտը“ յայտարարում է թէ՝

„Ժընէվեան ղեկավարները (՞) հայ ազգին մէջ պատրաստ (պատրաստ) գտան բոլոր այն տարրերը (հայի յեղափոխական տրամադրութիւն, դրամի առատութիւն) որոնցմէ կազմակերպելու յատկութիւններով օժտուած մարդը կրնային ստեղծել յեղափոխական զօրեղ բանակ մը“...

Սակայն չնայած մինչև իսկ քաղաքական նպաստաւոր հանգամանքներին, „Ժընէվեան ղեկավարները“ անընդունակ գտնուեցան այդ բանակը կազմելու և հայ ժողովուրդը „դաշնակից քիւրդին ու թիւրքին դէմ“ պաշտպանելու։ Փակագծի մէջ ասենք, որ այսպիսի մի երեխայական հայեացք մեր յեղափոխական կեանքի վրայ և պահանջ դէպի „ղեկավարները“՝ նոյն իսկ Վերակազմեալի „տաղանդի դասակարգից“ չէր կարելի սպասել։

„Ու յեղափոխական մարմինը (մը մարմինը) բոլոր այս „նախնական նիւթերը“ իր ափերուն մէջ թրծելով անոնցմէ պիտի ստեղծէր ապագան։ Այդ մարմին սպայակոյտը իր պաշտօնաթերթովը Ժընէվէն ատաձնադրորդ կ'ապահովէր հայ ազգը հանգիստ պահել սիրտը։ („այդ մարմին սպայակոյտը Ժընէվէն“ խօսւում է ուրեմն Հնչակեան Կեդրօնի մասին)։ Հզօր մարմինը իր լայնածաւալ յարաբերութիւններովը, իր բազմոստեան ճիւղերովը կը պատրաստէր ազգային փրկութիւնը։՞ Հայ ազգն ալ հաւատաց (՞)։ Սակայն թերահաւատներ չգտնուեցան չէ. բայց անոնցմէ շատերն ալ իրենց բոլոր սկեպտիկութեամբը մէկտեղ կը կարծէին որ զէթ Վասպուրականի մէջ շէնքով շնորհքով յատակագիծ պատրաստուած ըլլալու է։ Իսկ ամբողջ ազգը։ Ձեռքովը դրածի պէս ա՛լ Վանը փրկուած լմնցած կը համարէր շնորհիւ այդ մարմին (չլինի՞ թէ Դաշնակցութեանն է ակնարկւում)։ Իրաւ ալ երեւոյթները ապահովիչ էին։ Տասը տարիէն աւելի էր (տասը տարիէն աւելի... հասկացանք վերջապէս, արմէնականների մասին է եղել խօսքը), ռուսական եւ պարսկական սահմանագլուխներէն դէպի Տաճկաստան խորհրդաւոր երթեւեկութիւնները անդադրում էին, առասպելանման զրոյցներու ընկերակցութեամբ։ Իր կռնակը Կովկասեան լեռներուն հանգչեցուցած, յեղափոխական սպայակոյտը Ժընէվէն („Արմէնիան“ էլ չի եղել. նորից պէտք է Դաշնակցութեան վրայ կանգ առ-

նել) „մեծ ուժեր ունինք, մեծ ուժեր ունինք“ կը հոչակէր քարոզարշաւ։ Եւրոպական մամուլին մէջ անվախ կը ծանուցուէր Վանայ լճին շուրջը, Վասպուրականին բլուրներուն ստորոտը մեծաքանակ մթերուած զէնքերու գոյութիւնը... (*) Տասնեակ տարիներու խորհրդաւոր երթեւեկութիւնները, որոտալիր գոռում գոչումները միմիայն ծառայած են Վասպուրականը 50 կամ 60 հրացանով օժտելու“ (միայն 50 կամ 60 հրացանով)։

„Տասնեակ տարիներու երթեւեկութիւններ, գոռում գոչումներ“... ուրեմն ամենապակասը 20, 30 տարուայ բան։ Բայց այդ տողերը գրելու ժամանակ Դաշնակցութիւնը 7 տարի միայն գոյութիւն ունէր։ Ո՞ւմ մասին է վերջապէս խօսքը...

Այսպէս է պարզում իր միտքը „Մարտ“-ի „տաղանդի դասակարգը“... Եւ եթէ լեկած ուղեղի այս արտադրութիւնները իսկապէս Դաշնակցութեան են վերաբերում, աւելորդ ենք համարում ցոյց տալ նոյն իսկ, թէ այս բոլորը բացարձակ և կեղտոտ զրպարտութիւն է։

Իսկ գալով մասնաւորապէս զէնքի խնդրին, — մի խնդրի, որի մասին յամենայն դէպս մեր հակառակորդները ոչ մի իրաւունք չպիտի ունենային խօսելու, — մենք, իհարկէ, չենք հերքում այն փաստը, որ ոչ միայն Դաշնակցութիւնը մենակ, այլ և բոլոր յեղափոխական տարրերը միասին անկարող եղան գոհացում տալ զէնքի ահագին պահանջին։ Սակայն համարձակւում ենք կարծել, որ այդ մեծ պակասը լրացնելու համար անցեալում հարկաւոր էին ուրիշ միջոցներ, քան օրինակ, մեղայագրի, մատնութիւնների ճանապարհը, և ներկայումս՝ ուրիշ քարոզներ, քան „համբերութեան“ օրհներգը, լինի դա թէկուզ „անձնուիրութեան“ անուան տակ...

6.—Դաշնակցութիւնը ոչ միայն չի զինել Վասպուրականը, այլ և նա է եղել, „Մարտ“-ի ասելով, Վասպուրականի կոտորածի պատճառը։

„Փրկութեան առաջին պայմանը ճշմարտութիւնը գիտնալուն մէջ կը կայանայ։ Ու այդ ճշմարտութիւնը ո՞ւմէ ծածուկ պահուի։ Անգլիական „Կապոյտ գիրքը“ ամէն քան պարզած է։ Վասպուրական որ 1895-ի կոտորածէն ազատ մնացեր էր այլեւայլ քարեղէպ պատճառներով, 96-ին զոհ գնաց պարզապէս Ժընէվեան պատուիրակներու ստեղծած գրգռումին։ Անոնք մասնաւորիւորհրդով, յատուկ դիտաւորութեամբ գրգռումը ստեղծեցին“։

Այս տողերը կարդալիս մարդ ակամայ շւարում է, թէ ինչ է բռնած իր ձեռքում — թիւրք պաշտօնական մի թերթ, թէ հայ, այն էլ „յեղափոխական“ մի օրգան. — այն աստիճան ապշեցուցիչ ներդաշնակութիւն է տիրում սուլթանական և Վերակազմեալ երկու վարչութիւնների միջև հայկական ջարդերի այս պատմական բացատրութեան մէջ։

Գալով „Կապոյտ գրքին“, ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Ռուսաստանը ձգտում է հայ յեղափոխականներին ներկայացնել իբր Անգլիայի վարձկաններ, իսկ Անգլիան իր կողմից՝ ռուս կառավարութեան գործակալներ։ Գաղտնիք չէ նոյնպէս, որ այդ պետութիւնների ներկայացուցիչները աշխատում են իրերի դրութիւնը ներկայացնել այնպէս, ինչպէս այդ պահանջում են իրենց պետութիւնների շահերը։ Մասնաւորապէս Անգլիայի դեր-հիւպատոս Վիլիամսի բռնած խայտառակ դիրքը դէպի հայ յեղափոխականները, նոյնիսկ Վանի կուի ժամանակ, նրա առանձին ջանքերը Դաշնակցութեանը վնասելու արդէն բաւականաչափ պարզուած են „Դրօշակ“-ի մէջ։ Այնպէս որ զարմանալի ոչինչ չկայ, եթէ այդ — ըստ Պետոյի — „ոստիկան-հիւպատոսը“ կոտորածների մեղքը Դաշնակցութեան վրայ բարդի։ Եւ այսպիսի հանգամանքներում որոշ կարգի խնդիրների ստուգութիւնը „Կապոյտ գրքի“ մէջ փնտռելը միևնոյն բան կը լինի, ինչ՝ եթէ մէկը յեղափոխական ձեռնարկների մասին ստոյգ գաղափար կազմելու համար՝ „Մարտ“-ի էջերին դիմի։

Մեր կողմից կը յիշեցնենք ընթերցողին, որ Վանի կուի ժամանակ Դաշնակցական ուժերի միայն մի փոքրիկ մասն էր գտնւում քաղաքի մէջ. մի մասը գաւառներն էր մեկնել („Դրօշակ“ № 27, 1896) և մի ստւար խումբ էլ ճանապարհ էր ընկել զէնք բերելու յատկապէս քաղաքի համար [1]։ Ակներև է, որ Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէն եթէ „գրգռում ստեղծելու“ յատուկ դիտաւորութիւն ունենար, իր ուժերը չէր ցրիլ։ Այս մէկ. երկրորդ էլ՝ ճիշդ դրա հակառակը՝ յեղափոխականների թւի այդ նւազին էր մասամբ պատճառը, որ կառավարութեան կողմից վաղուց ծրագրւած Վանի ջարդը փութացրեց։ Քաղաքում գտնւած յեղափոխականները — դաշնակցական, արմենական, հընչակեան — ջարդը սկսելուց յետոյ միայն զէնքի դիմեցին ժողովուրդը պաշտպանելու համար։

7.—Դաշնակցութիւնը պատճառ է եղել ոչ միայն 1896-ի Վասպուրականի կոտորածի, այլ և 1895-ի ընդհանուր կոտորածների։ Լսեցէք.

„Սեպտեմբեր 18 | 30 ժողովրդային ցոյցը յեղափոխութեան քարոյական յաղթանակը եղաւ։ Դրական օգուտներ պիտի քաղէինք, եթէ Տրապիզոն Պահրի փաշայի ղէմ վիժած աղետաբեր փորձը վրայ հասած չըլլար“։

Այս փոքրիկ երկտողով „Մարտը“ մի անգամից երեք խոշոր նապաստակ է ուզում բռնել. նախ՝ գովաբանել այդ ցոյցը, վերագրելով դրան բացառիկ նշանակութիւն մեր յեղափոխական կեանքի մէջ. երկրորդ՝ վերացնել այն մեղադրանքը, որ հասարակութեան մի մասը դնում է այդ ցոյցի վրայ, նրան համարելով կոտորածների պատճառ, և երրորդ՝ այդ մեղադրանքը ձգել Դաշնակցութեան գլխին։

Մենք աւելորդ ենք համարում զանազան հիմունքներ առաջ բերելով. արդարացնել Բահրիի վրայ արած փորձի հեղինակներին, այն պարզ պատճառով, որ ինքը Վերակազմեալ Վարչութիւնն էլ գիտէ, թէ իր ասածները կեղծ են, սուտ են և ոչ այլ ինչ են, եթէ ոչ „թուռնիկներին“ վախեցնելու մի նոր միջոց։

Վերակազմեալ Հնչակեան ընդհանուր ժողովի հին Կեդրոնի դէմ արձակած վճռագրից մենք իմանում ենք, որ այդ ամբողջ ժողովը ոչ միայն գերագոյն նշանակութիւն չի տւել 1895-ի հոչակաւոր ցոյցին, այլ և, — ով կը հաւատայ, — այդ ցոյցը և ճիշդ այդ ցոյցն է համարել կոտորածների պատճառ, և ոչ որևէ այլ դէպք։

Բերենք վճռագրի այդ մասը։

„Նկատելով որ Պոլսոյ սեպտեմբեր 18 | 30-ի ցոյցը կազմակերպելու հրահանգ տուած են առանց մեր դատին նպաստաւոր ըլլալուն հիմնական համոզումը եւ ապացոյցը ունենալու եւ առանց նկատողութեան առնելու քաղաքական հանգամանքները հակառակ իրենց տրուած խորհուրդներուն։

„Նկատելով որ Պոլսոյ այս ցոյցին առթիւ երկրին զանազան կողմերու մասնաճիւղերուն զգուշացուցիչ հրահանգներ չեն ղրկած, որով երկիրը ցոյցին

1) Այս խումբն էր, որ ընդհարում ունեցաւ քրդերի հետ Դերիկի մոտ ուր զոհւեց եւ յայտնի Շէրօն։

բոլորովին անտեղեակ ըլլալով չէ կարողացած անձնապաշտպանութեան պատրաստուիլ. ուստի եւ զոհ գացած է յանկարծական կոտորածներու“։

Իսկ ո՞ւր մնաց Տրապիզօնի փորձը...

Ցուսով ենք, „Մարտ“-ի խմբագրութիւնը տեղիք չի ունենալ մեր այս մերկացումի առթիւ վշտանալու։ Զի՞ որ „փրկութեան առաջին պայմանը ճշմարտութեան մէջ կը կայանայ։ Ու այդ ճշմարտութիւնը ո՞րմէ ծածուկ պահուի“։ Իսկ Վերակազմեալ Վարչութեան Կապոյտ գիրքը „ամէն բան պարզած է“...

8.—Դաշնակցութեան ձեռնարկները վնասակար և „համբերութեան“ տակտիկան փրկարար ցոյց տալու համար՝ „Մարտը“ չի խորշում և միւս ազգերի յեղափոխական պատմութիւնը ստելուց.

„Ցոյները յիսուն տարի, Պուլկարները քառասուն տարի համբերութեամբ ու լռութեամբ, այսինքն խելքով, աշխատեցան, անկէ ետքը արիւնին թափեցին ու ազատեցան“։

Ընթերցողի ինքնասիրութիւնը չվիրաւորելու համար առաջ չենք բերում Յունաստանի ու Բուլղարիայի յեղափոխական շարժումների իսկական պատմութիւնը։

Բաւական է... Այս բոլորը, — չմոռանաք, ընթերցող — միայն մի համարի մէջ է։

Մենք հրաժարւում ենք „Մարտ“-ի միւս համարների հրաշալիքները միառմի թուելուց. ընթերցողներից ով ախորժակ ունի այդ ճահճի մէջ աւելի երկար մնալու, ինքը կարող է այդ անել, այն էլ առանց որևէ դըժուարութեան։ Եւ ինչպէս ասում է ինքը „Մարտը“ (թիւ 1) „ուստի և հայ ժողովուրդը Հնչակեան պաշտօնաթերթին մէջ ա՛լ թող չի փնտռէ շատախօսութիւն, խաբեբայութիւն“... Ճիշդ որ փնտռելու հարկը բոլորովին չի զգացւում, — խաբեբայութեան փաստերը այնքա՞ն շռայլաբար են սփռուած „Մարտ“-ի էջերում... Սակայն վերջին անգամ ցոյց տալու համար, թէ որքան սաստիկ է „Մարտ“-ի ձգտումը Դաշնակցութիւնը սևերես դուրս բերելու իր „թռոնիկների“ առաջ, բերենք մի փոքրիկ, բայց բնորոշ կտոր ևս.

„Մեր վաթսուն հայ քաջերը անցել են սահմանագլուխը“ 1) կը գոչէ ուրիշ մը. այդ թերթին Պոլիս հասնելուն յաջորդ օրը թիւրք օրագիրները կը հաղորդեն թէ „Բաղէշի կիսավաշտը հրաման ստացաւ շուտով Վան երթալու“։ („Մարտ“, N՝ 1)։

Այս անգամ ևս „Մարտը“, —սկզբունքով հակառակ պարզութեան,—թողնում է, որ ինքը՝ ընթերցող-թռոնիկը իր սեփական խելքով հասկանայ, թէ անարգանքի արժանի այս թերթը „Դրօշակն“ է, որի անխորհրդապահութեան շնորհիւ իբր թէ „Բաղէշի կիսավաշտը հրաման ստացաւ Վան երթալու“։ Բայց ահա այդ 60 հոգու սահմանն անցնելու դէպքը։

Պոլսի ու Տրապիզօնի կոտորածներից յետոյ, ընդհանուր կոտորածների լուրը տարածելուն պէս, դաշնակցական մի խումբ, որոնց հետ նաև 16 արմէնականներ, ընդամէնը 60 հոգի, զէնքի պաշարով շտապում են դէպի Վան, բայց սահմանագլխից քիչ հեռու, Սարայի դաշտի մէջ, խումբը շրջապատւում է յանկարծ զինուորների ու քրդերի ահագին բազմութեամբ։ Երկու ցերեկ և մի գիշեր կուելուց յետոյ խումբը, պատռելով թշնամու շղթան, բաժան բաժան առաջ է անցնում։ Խմբի մի մասը նոր փայլուն յաղթութիւն է տանում Բօղազքեասանում, և միւս մասը մտնում է Վան։

Այս բոլորը տեղի են ունեցել 1895 թուի Հոկտեմբերի 13/25-ից սկսած, իսկ „Դրօշակ“-ի մէջ այս կռիւների մասին առաջին փոքրիկ լուրը լոյս տեսաւ դեկտեմբեր 3/15-ին, որ Պոլիս կարող էր հասնել և կառավարութեան ձեռքը ընկնել դէպքից ամենապակասը ամիսուկէս յետոյ։ Արդ՝ Վերակազմեալ քաղաքագէտները ուզում են հաւատացնել, որ ոչ թէ իրենք կռիւներն են մատնել խմբի սահմանն անցնելու իրողութիւնը, այլ բաւական ժամանակ յետոյ „Դրօշակում“ լոյս տեսած լուրը։ Դաշնակցութեան վարկը ձգելու ձգտման մէջ „Մարտ“-ի „տաղանդի դասակարգը“, ինչպէս տեսնում ենք, չի խորշում նոյնիսկ ապուշի դերն ստանձնելուց...

Սա էլ իր տեսակի „անձնուիրութիւն“ է։

Այսպէս, եթէ Վերակազմեալ Վարչութեան „տաղանդի դասակարգը“ ինչ ինչ պատճառներով ցոյց չտուեց իր շնորհքը ո՛չ մեր կեանքի անցեալի ու ներկայի քննութեան և ոչ ապագայում մեր բռնելիք ընթացքի պարզաբանութեան մէջ, եթէ դրական համոզումների փոխանակ մենք տեսանք միայն ապականած ուղեղի զզուելի թափթփունքներ, սակայն ոչ ոք չի կարող ուրանալ, որ այդ դասակարգի տաղանդը իր ամբողջ էութեամբ փայլեց զրպարտութեան մէջ։ Ահա իսկապէս մի ասպարէզ, ուր նա իրեն կատարեալ տէր է զգում, ուր նրա ձայնը հնչում է հաստատ. հմուտ մատները գործում են արագ, աղաւաղած փաստերը շարւում են իրար ետևից. հնարածները լրացնում են պակասը ու կեղտերը թափւում են առատ հոսանքով։ Եւ այս բոլորը sans façon, առանց քաշւելու, առանց ամօթ զգալու, առանց մի վայրկեան անգամ անհանգստանալու թէ այդ բոլորը սև տառերով գրաշմւում է սպիտակ թղթի վրայ և հետևաբար պիտի մնայ ու մնայ հրապարակի վրայ մինչև նոյնիսկ „Թռոնիկներ“-ի չափահաս դառնալը։

Այսպէս է այն „նոր ճամբան“ որով „Ազգային պաշտպանութեան Կեդրոնը“ պատրաստւում է տանել ազգի փրկութեան գործը...

ԱՐՇԱՒԱՆԲ ՌՈՒՍԱՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԴԷՄ

Տաճիկ կառավարութեան վերաբերմամբ „անպայման ժամանակով“ համբերութիւն, անձնուէր-սպասողական դրութիւն և նոյնիսկ մի տեսակ հաշտարար ոգի քարոզող Հնչակեան Կուսակցութեան Վերակազմեալ Կեդրոնական Վարչութիւնը, ինչպէս տեսանք, կորցնում է և՛ համբերութիւնը, և՛ անձնուէր-սպասողական դրութիւնը, և՛ ունեցած խելքը, ու մարմնացեալ եռանդ է կտրում, երբ հարցը գալիս է Դաշնակցութեան վնասելուն։ Այս հանգամանքը պէտք է, հարկաւ, բացատրել Վերակազմեալ Վարչութեան կողմից Մուրութեան իրականացումը ըստ կարելւոյն արագ տեսնելու տենչով... Եւ անշուշտ, այդպէս էլ ամբողջ Հայութիւնը իր շուրջը բոլորելու, մի կեդրոնացեալ բանակ կազմակերպելու նպատակով էր, որ Նոյն վարչութիւնը ծագեցրեց ռուսահայ և թրքահայ յեղափոխականների խնդիր և իր

1) Ահա „Դրօշակ“-ի այդ հատուածը. „Հայդուկային խումբը 60 հոգուց բաղկացած հազիւ սահմանագլուխը անցած Սարա ասւած գայմազամութեան մօտերը կը պատահի համիդիէ զինուորների մի խմբի եւ կըսկսի սաստիկ կռիւ“։ („Դրօշակ“ 1895, N՝ 21)։ Ինչպէս ամէն բան, չակերտի գործածութիւնն էլ „Մարտ“ը մտքեր խեղաթիւրելու է ծառայեցնում... եւ շատ յաճախ։

արքանեակների աջակցութեամբ յեղափոխականին վայել աւիւնով արշաւանք սկսեց... ռուսահայ գործիչների դէմ։ Այս հանրածանօթ արշաւանքի վրայ գաղափար տալու համար միայն՝ մենք յանձնարարում ենք „Մարտ“-ի „Ասպարէզը“ վերնագրով յօդուածը (թիւ 11, 1898), և որովհետև մեր ընթերցողներից շատերը բախտաւորութիւն ունեն զուրկ լինելու „Մարտ“-ի մէջ շարուած գոհարների հետ ծանօթանալու հնարաւորութիւնից, առաջ ենք բերում նրանից մի կտոր.

«Հնչակեան Կուսակցութեան առաջին Ընդհանուր ժողովին գումարումէն ի վեր ռուսահպատակ եւ թրքահպատակ Հայու խտրութեան հարց մը հրապարակ նետուած է։ Փնտռենք ծագումը։

Սր մը Թիւրքիոյ Հայը արիւնի մէջ լողայ. այդ օրը աչքերը, հաւատքո՞վ լեցուն, դարձուց Ցեղափոխութեան գերագոյն վարիչ Կովկասառաք զօրավարներուն։ Անոնց հաստնելուն սպասեց սրտատրոփ. իրեն առաջնորդ կ'ուզէր տեսնել անոնք, ցաւերուն ցաւակից։ Անոնք, հերոս-զօրավարները, անդին Հէբր'ոս Պուշի կարմրախայտ վիլլաներուն, Քարուժի գեղածիծաղ շալէներուն մէջ իրախճանքի սեղանին շուրջը բազմած, Հայութեան կապուտ կողոպուտովը բեռնաւորեալ սեղանին շուրջը, Թիւրքին արիւնը կը խմէին հրակայլակ գինիի բաժակներէ, մորթուող օգնութիւն կանչող Հայուն երգելով.

Ազնիւ ընկեր, մեռանում. . . ես
Բայց հանգիստ եմ հոգւով ես։

Օ՜հ, զզուանքն ու զայրոյթը որ զգաց Հայութիւնը։ Հնչակեան Նորընտիր Կեդրոնին մէջ Կովկասեան Հայու բացակայութիւնը, Հնչակեան պաշտօնաթերթին թրքահայ լեզուով եւ թրքահպատակ Հայերու խմբագրութեամբ հրատարակութիւնը, «Ժընէվեան» խմբակներու դիմակաթափութիւնը, այդ զայրոյթին արտայայտութիւնը եղան».

„Մարտ“-ի այս գեղարուեստական կտորը ևս կարօտ է բացատրութեան։ „Հերոս-զօրավարները... Քարուժի գեղածիծաղ շալէներուն մէջ“ ասելով՝ պէտք է հասկանալ „Դրօշակ“-ի խմբագիրներին, որոնց „Մարտ“-ը Քարուժ է տեղափոխել. երևի, poste-restante, Carouge „Դրօշակ“-ի հին հասցէի հիման վրայ, իսկ „Հէբրտ'ոս Պուշի կարմրախայտ վիլլաներն“ էլ, հաւանական է, հնչակեան հին Կեդրօնի անդամներին է վերաբերում։ „Մարտ“-ը հասկացնում է իր թոռնիկներին, թէ երբ Տաճկաստանում՝ հայերը կոտորւում էին, „Դրօշակ“-ի ռուսահայ խմբագիրները ու հնչակեան հին Կեդրօնի անդամները քէֆ էր էին անում, այն էլ հասարակական փողերով։

„Խրախճանքի սեղանի“ վրայ մենք չենք ուզում կանգ առնել, որովհետև, նախ՝ այդ սեղանի շուրջը պտտելը վայել ենք համարում միմիայն իրենք իրենց „յեղափոխական“ անւանող „գեադաներին“, և երկրորդ, որովհետև դա մեզ կարող էր հեռու տանել, մինչև Պոլսի հնչակեան պետերից մէկի՝ Քարեպաշտի՝ բաւականին պերճախօս նամակը (17 մարտ 1896), որ այս րոպէիս մեր ձեռքի տակն է և որ խօսում է 1895 թւի սուրբ Երրորդութեան եկեղեցու հերոսների կեանքից։

Գալով հասարակական դրամը վատնելու խնդրին, ցոյց տալու համար չափն ու սահմանը անցած այս լիրբ զրպարտութեան արժէքը, ստիպւած ենք յայտարարել հետևեալը։ Մինչև 1895 փետրուարի վերջը „Դրօշակ“-ի խմբագրութեան մէջ միայն մէկն էր ապրում կուսակցութեան հաշւով, մինչև օգոստոս — ոչ ոք. իսկ օգոստոսից սկսած, ուրեմն նկարագրած քէֆերի ժամանակ՝ գրաշարը միայն. ուրիշ ով կար՝ ապրում էր իր սեփական միջոցներով։

Յետոյ. միթէ՞ յեղափոխական գործում եղող բոլոր ռուսահայերը խմբագիրներ են միայն և միմիայն ծընէվում են պատահում։ Մի փոքր ամօթ էր հարկաւոր, որպէսզի ժընէվեան ռուսահայ խմբագիրների թէկուզ հարիւրապատկած թւի առաջ չմոռացուէր գործին ծառայող ռուսահայերի ընդհանուր թիւը. մի փոքր սէր էր հարկաւոր դէպի գործը, որպէսզի չմոռացուէին նաև մի շարք ուրիշ կովկասեան բաներ, որոնք միանգամայն անհրաժեշտ են „ազգային պաշտպանութեան“ համար, — բայց այդպէս չէ մտածում „Մարտ“-ը. „Մարտ“-ի ասելով, հայութիւնը իր զզուանքն ու զայրոյթն է արտայայտել և այն էլ շատ որոշ ձևով.

„Հնչակեան Նորընտիր Կեդրօնին մէջ Կովկասեան Հայու բացակայութիւնը, Հնչակեան պաշտօնաթերթին թրքահայ լեզուով և թրքահպատակ Հայերու խմբագրութեամբ հրատարակութիւնը“ և իվերայ այսր ամենայնի „Ժընէվեան խմբակներու դիմակաթափութիւնը (՞) այդ զայրոյթին արտայայտութիւնը եղան“։

Ցեսաք հայութեան զայրոյթը...

Յօդուածի շարունակութիւնից իմանում ենք սակայն, որ Հնչակեան կուսակցութիւնը չի արհամարհում Կովկասի հայերին, որ նրա կռիւը „վատերի դէմ է միայն“ և որ նա պատրաստ է գրկաբաց ընդունել „խելք ունեցող, բարոյականի տէր, ազգին ցաւերուն սրտանց հոգածու ռուսահպատակ հայերը“։ Սա՝ հարկէ քիչ մխիթարութիւն չէ ռուսահպատակ գործիչների համար...

Որքան չարաչար հակասում՝ սակայն այդ թքով կպցրած կեղծ բառերը ռուսահայերի դէմ մղւող այն բացայայտ արշաւանքին, որ „Մարտ“-ի ամենայատկանիշ գծերից մէկն է կազմում և որին հաւատարիմ մնալով նոր-հնչակեան գործիչները հրապարակային ժողովների մէջ աւելի հետևողական են գտնւում՝ ափաշկարայ հրաւիրելով իրենց ունկնդիրները հեռու մնալ այլ ևս բոլոր ռուսահայ և պարսկահայ յեղափոխականներից։

Այսպէս թէ այնպէս՝ բայց, ինչպէս մենք տեսանք վերը բերած կտորից, Վերակազմեալ Հնչակեան Վարչութիւնը չի ցաւում, որ իր Կեդրօնի մէջ չմտաւ գոնէ մի հատիկ ներկայացուցիչ հայութեան մի շատ նշանաւոր մասից, որ նրա խմբագրութեան մէջ չկայ ոչ մի ռուսահայ, որ կարողանար արձագանգ լինել իրեն աւելի ծանօթ միջավայրի համար, այլ պարծենում է դրանց բացակայութեամբ։ Վերակազմեալների մթնոլորտում թշնամին մոռացւել է և բնականաբար կռիւը ուղղւում է զինակիցների դէմ։ Դա շատ բնորոշ գիծ է հայի պատմութեան մէջ, բայց նոյն այդ պատմութեան մէջ էլ իրեն վայել անունն ունի...

(Շարունակելի)

ՎՐԻՊԱԿ. — Ապրիլ 16 Յաւելուածի 8-րդ էջում մի սխալ է սպրդել։ Ամերիկայի Նոր Հնչակեան Նահանգային Վարչութեան շրջաբերականը հրատարակւել է ոչ թէ 1896-ի, այլ 1897-ի նոյեմբեր 7-ին։ Բանից դուրս է գալիս ուրեմն, որ ո՛չ միայն 7 ապրիլ 1897 „Մարտ“-ի մեծաղղորդ յայտարարութիւնների նախընթաց „վեց ամսում“ այլ դեռ շատ ուշ էլ, 1897-ի նոյեմբերին իսկ, „Կեդրոնական Վարչութեան կանոնաւոր գործառնութիւնք“ դեռ չէին էլ սկսւել, եւ դեռ հարկ էլ է զգացւել որ Ամերիկայի հնչակեաններին դիմեն դրամական „զոհողութիւններով... Կեդրոնական Վարչութիւնը լուծելէ փրկելու“ համար...